AZG NEW PDF.qxd 2/18/2010 10:25 PM Page 1

Ազգ
Azg

19 ՓԵՏՐՈՒԱՐ 2010 ՈՒՐԲԱԹ 29 (4410)

ISSN: 1829-1651

# Էմմիին ու Միհրանին Հանրայինը հաղթանա՞կ էր խոստացել

Կրքերը «Եվրոտեսիլի» շուրջը չեն հանդարտվում: Իզուր չեն ասում, որ Հայաստանում ամեն ինչ՝ քաղաքականությունից մինչեւ «Եվրոտեսիլ», լուծվում է նույն հարթության վրա: Միշտ հայտնվում է ինչ-որ մեկը, որ նախորդից ավելի մեծ կապեր ունի ու հաղթում է:

Ինչեւէ, այս տարվա «Եվրոտեսիլը» գերազանցեց բոլոր սպասելիքները: Ինչ ասես չտեսանք՝ բողոքի ցույցեր, լցոնումների փոխարեն sms արգելափակումներ, հայցադիմումներ, վիրավորանքներ: Որ այսպես շարունակվի, գուցե մասնակիցները դիմեն նաեւ Մարդու իրավունքների դատարան:

Մինչ այդ, սկանդալային բացահայտումներ է արել Էմմին: Երկու օր ընթացող խոսակցությունները, որ Հանրային հեռուստաընկերությունն իրեն ու Միհրանին խոստացել է հաղթանակ, երեկ երգչուհին հաստատել է: «Հանրային հեռուստաընկերությունը խոստացել էր, որ նախընտրական մրցույթ չի լինելու, որ Հայաստանը Օսլոյում ներկայացնելու ենք ես ու Միհրանը»: *Տես էջ 3*

# Խորհրդարանում ծանր քննարկումներ կլինեն

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Հայ-թուրքական Արձանագրությունները Ազգային ժողովում հանգրվանելուց հետո Հայաստանի քաղաքական կուսակցությունները նոր ուժով սկսեցին խոսել դրանց մասին: Ակնհայտ մի բան, սակայն, մինչ այդ պահով ծանրութեթեւ անելը, նկատենք. հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ նախաձեռնությունն արդեն բոլորում է տարին, իսկ Արձանագրությունների նախաստորագրումից հետո էլ մի քանի ամիս է անցել, սակայն ոչ մեկը չի կարող ցույց տալ որեւէ փաստարկված փաստաթուղթ, որը ծնել են մեր քաղաքական կուսակցությունները՝ քաղաքական նպատակահարմարության խոսակցությունից զատ թվերով եւ փաստերով ցուցանելով հայ-թուրքական սահմանի բացման տնտեսական նպատակահարմարությունը: Գուցե դրա համար կան շատ օբյեկտիվ պատճառներ, ասենք՝ Հայաստանի տնտեսությունից սատանան անգամ գլուխ չի հանի՝ այնքան ամեն ինչ ստվերում է ու հնարավոր չէ օբյեկտիվ հաշվեկշիռ ունենալ: *Տես էջ 2*

# Միայն խաղաղ երկխոսությամբ

## *Եվրոմիության կոչը՝ Ադրբեջանին*

Ղարաբաղյան պատերազմի վերսկսման մասին հաճախացած լուրերին տարբեր մեկնաբանություններ են տրվում: Գերտերությունները, բնականաբար, զերծ չեն մնում այս հարցում «որոշ հստակեցումներ» մտցնելուց: Մասնավորապես Ռուսաստանը, տարբեր պաշտոնյաների եւ փորձագետների մակարդակով, հայտարարություններ արեց, թե ինքը բացառում է հայ-ադրբեջանական պատերազմի վերսկսումը: Իսկ փետրվարի 18-ին Բաքվում Եվրոմիության դեսպան **Ռոլանդ Կոբիան** նշեց, թե Եվրոմիության «Արեւելյան համագործակցություն» ծրագիրը կօգնի Ադրբեջանին՝ երկխոսություն սկսելու հարեւանների հետ. «Չնայած մեր կառույցն անմիջականորեն ներգրավված չէ հակամարտության լուծման բանակցություններում, սակայն «Արեւելյան համագործակցությունը» կօգնի Ադրբեջանին՝ երխոսություն սկսելու հարեւանների հետ, որը ամեն մի հակամարտության լուծման հիմնաքարն է», հայտարարել է Կոբիան: Ըստ եվրոպացի դիվանագետի՝ խնդրի կարգավորմամբ զբաղվող Մինսկի խումբը բավական արդյունավետ է աշխատում եւ անում է հնարավոր ամեն ինչ լուծում գտնելու: «Եվրոմիությունը չունի համապատասխան հնարավորություններ՝ միջամտելու գործընթացին, սակայն մենք պատրաստ ենք օգնելու, եթե մեզ առաջարկեն դա», շեշտել է Կոբիան՝ հավելելով, որ Եվրոմիությունը ոչ մի դեպքում կողմերին չի պարտադրելու հարցի լուծման սեփական բանաձեւերը. «Մենք ընդամենը պատրաստ ենք օգնելու մեր փորձով», եզրափակել է Բաքվում Եվրոմիության դեսպանը:

Իսկ Եվրոմիության փորձը բավական հետաքրքրական կլինի օգտագործել Ղարաբաղի կարգավորման գործընթացում, մանավանդ եթե վերհիշենք Կոսովոյի իրադարձությունները:

Հ. ԱՓՅԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

# Ջավախք. լինե՞լ, թե՞ չլինել

## *Հայերին Վրաստանում չեն սիրում, բայց տարածաշրջանի քրիստոնյաները մնում են էլի Հայաստանն ու Վրաստանը*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ջավախահայության համար առաջնային են մի քանի հարցեր, այդ թվում՝ հայոց լեզվին տարածաշրջանային, Հայ առաքելական եկեղեցուն Վրաստանում իրավական կարգավիճակ տալու, նաեւ հայաբնակ Ջավախքում հետապնդումները դադարեցնելու մասով: Երեկ Թեքեյան կենտրոնում կայացած ներկայացուցչական սեմինար-քննարկումը, որ կազմակերպել էր Ջավախահայության իրավունքների պաշտպանության խորհուրդը (2009 թ. դեկտեմբերին ձեւավորված կազմակերպություն, որ միավորում է «Ջավախք» հայրենակցական միությանը, «Վիրք» չգրանցված ջավախահայ կուսակցությանը, «Ջավախք» ժողովրդական շարժմանը, «Միշտ վերլուծական կենտրոնին ու «Երկիր» միությանը»), ամենից առաջ այս հարցերի լուծումը կարեւորելու մոտեցում դրսեւորեց:

Ազգային ժողովի պատգամավոր **Շիրակ Թորոսյանի** խոսքով, խորհուրդը, ինչպես եւ Հայաստանն ու հայ ժողովուրդը հայ-վրացական բարեկամության ջատագով են, այսինքն՝ հավաքն ու ջավախահայության խնդիրների բարձրաձայնումն այդ համատեքստում են: Ու չնայած դրան, արձանագրվում է, որ վերջին տարիների վրացական իշխանությունները պատրաստ չեն գնալու երկխոսության, ուզում են լուսանցքում թողնել ջավախահայության խնդիրները՝ առաջին պլան մղելով հայ-վրացական հարաբերությունների տնտեսական ասպեկտը, ինչի հետեւանքով Ջավախքը հայաթափվում է:

Սեմինարի առաջին զեկույցը ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն **Աշոտ Մելքոնյանինն** էր, որ ներկայացրեց Ջավախքի աշխարհաքաղաքական դերն ու նշանակությունը: Պատմաբանը նախընտրեց խոսել Ջավախքի մասին ոչ թե հենց հայ-վրացական հարաբերությունների, այլ վրաց-ռուսական, վրաց-թուրքական ու վրաց-ադրբեջանական մոտեցումների տեսանկյունից:

Ըստ այդմ, Թուրքիայի համար Ջավախքը մշտապես եղել է հայ-վրացական հարաբերություններում սեպ խրելու միջոց, իսկ թուրք մեսխեթցիների հայրենադարձության թեմայով էլ վրացական իշխանությունները շահարկում են հայկական գործոնը, մինչդեռ իրենք իսկ նույն մեսխեթցիների հայրենադարձման պարագայում պայման են դնում որպես ազգություն անձնագրում վրացի նշելու հանգամանքը: Ադրբեջանի գործոնն էլ Ջավախքում վերջերս հսկայապես ընդգծվում է՝ Կարս-Ախալքալակ երկաթգծի շինարարության ֆոնին: Ադրբեջանական ընկերությունը շինարարական աշխատանքներով է զբաղված, սրա չարածն էլ անում են թուրքերը:

Մելքոնյանի պնդումներով, այս ամենին ավելանում է նաեւ ռուսական գործոնը այն առումով, որ վրաց-ռուսական հարաբերությունների վատթարացումն է, ըստ որոշ վրացի պատմաբանների մեկնաբանության, Վրաստանին հրում Ադրբեջանի ու Թուրքիայի գիրկը:

Վրացական իշխանությունների հայաթափման քաղաքականության մեխանիզմները ներկայացնող **Թամարա Վարդանյանը**, որ «Նորավանք» գիտահետազոտական կենտրոնի փորձագետ է, ներկայացրեց, որ վիճակագրության համաձայն Վրաստանը վրացականացվում է. եթե 1926 թ. մարդահամարի տվյալներով երկրում վրացի բնակչությունը կազմում էր 59,9 տոկոս, իսկ հայերը՝ 17,6, ապա 2002-ի մարդահամարի համաձայն վրացիները կազմել են 83,8, հայերը՝ 5,7 տոկոս: *Տես էջ 3*

# Արմեն Սարգսյանը հերքել է իր վարչապետ դառնալու մասին լուրերը



Վերջերս մամուլում հրապարակումներ եղան, որ Հայաստանի նախկին վարչապետ Արմեն Սարգսյանին գուցեեւ կրկին առաջարկվի Հայաստանի վարչապետի պաշտոնը. «Ես հավատում եմ, որ երկրին կարելի է օգտակար լինել ոչ միայն քաղաքական մասնակցություն ունենալով կամ պատկանելով այս կամ այն քաղաքական կուսակցությանը, լինելով պաշտոնյա կամ ոչ պաշտոնյա, իշխանության մեջ կամ ընդդիմության մեջ: Ես գտնում եմ, որ կարելի է այդ բոլորից զերծ մնալ եւ միաժամանակ օգնել երկրին, հայրենիքին, ուղղակի կենտրոնանալ այն խնդիրների վրա, որտեղ դու կարող ես փոքր ներդրում ունենալ», ասել է Լոնդոնում բնակվող, այժմ Երեւանի պատմամշակութային ժառանգության պահպանմանն ուղղված «Երեւան, իմ սեր» նախագիծը նախաձեռնած Արմեն Սարգսյանը: Իսկ թե որտեղի՞ց է վերցնում մամուլը մասից ծծած լուրերը, կամ ի՞նչ թաքնված նպատակներով են «հավաստի աղբյուրները» շրջանառում այդ կարգի լուրերը, սա էլ այլ խոսակցության թեմա է:

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

**հրապարակում է**

Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի 2009թ. նվիրատուների անվանացանկը եւ խորին շնորհակալություն հայտնում բոլորին: Նվիրատուների անվանացանկի առաջին 3 մասը հրապարակվեց օրաթերթի փետրվարի 16-ի, 17-ի եւ 18-ի համարներում, այսօր հրապարակում ենք վերջին հատվածը: Ամբողջական ցանկը կարող եք տեսնել նաեւ հիմնադրամի կայքէջում www.himnadram.org, ինչպես նաև «**Ազգ**» օրաթերթի www.azg.am կայքէջում

# Գարեգին արք. Բեկչյան. «Կմաղթեմ, որ ժողովուրդի մեծ մասը մասնակցի ընտրություններուն»

*Ինչպես արդեն ծանուցել ենք, առաջիկայում Կ. Պոլսում անցկացվելու են 85-րդ աթոռակից պատրիարքի ընտրություններ: Այդ առիթով «**Ազգի**» ընթերցողներն արդեն հաղորդակից են եղել երեք թեկնածուներից մեկի՝ Գուգարաց թեմի հոգեւոր առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի հետ զրույցին: Այսօր ներկայացնում ենք հաջորդ թեկնածուի՝ Գերմանահայոց թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանի հետ մեր հարցազրույցը, որը մեր թերթում առաջին անգամ լինելով՝ ծավալուն լինելու արտոնությունն ունի:*



**- Սրբազան հայր, պաշտոնավարել եք Ֆրանսիայում, հետո Գերմանիայում, հիմա էլ ուզում եք վերադառնալ այնտեղ, որտեղ ծնվել եք, կրթություն ստացել՝ Պոլիս՝ մասնակցելու համապատրիարքության կամ աթոռակից պատրիարքի ընտրություններին: Ի՞նչ կասեք այս առիթով:**

- Այո, ընտրությունը, որ տեղի պիտի ունենա համապատրիարքության, դժբախտ կացության մը հետեւանքն է, որովհետեւ Մեսրոպ պատրիարք Մութաֆյան 1998-ին երբ ընտրվեցավ, շատ խոստումնալից անձնավորություն էր եւ դժբախտաբար վերջին 2-3 տարիները բոլորովին անբուժելի հիվանդության ճանկերուն մեջն ինկավ եւ հետեւաբար քանի որ կապրի, համապատրիարք ընտրելու որոշում տրվեցավ կրոնական ժողովին կողմե: Համապատրիարքության կարգ պատրիարքության պատմության մեջ չկա, սակայն քանի որ պատրիարք մը ցկյանս կընտրվի, եւ մարմին մը չկա զինք պաշտոնանկ ընելու, եւ ինքն ալ կարող չէ հրաժարելու իր կացության պատճառավ, հետեւաբար համապատրիարքություն որոշվեցավ իրականացնել:

**- Մեկ ուրիշ խումբ սա որակում է պատրիարքական ընտրություններ:**

- Համապատրիարք ընտրելու կարծիքն ամենեն առաջ «Մարմարա» օրաթերթի խմբագրապետ Ռոպեր Հատտեճյանի գաղափարն էր, որը շատ ճիշտ գաղափար մը ըլլալով, ընդունվեցավ բոլորի կողմե, քանի որ պատրիարքը կապրի, ի հարգանս անոր, պատրիարքական աթոռի հանդեպ բոլոր համակիրներու ունեցած սերը, հարգանքը, հետեւաբար այդ բոլորը պատճառ եղան, որ համապատրիարք ընտրելու կարելիությունը ստեղծվի եւ ինչպես ըսի, մարմինն մըն ալ գոյություն չունի պաշտոնապես զինքը այդ պաշտոնեն ես առնելու, հետեւաբար՝ համապատրիարքություն, իսկ ինչ կվերաբերի ընտրող հանձնախմբի կարծիքին, որուն պաշտոն հանձնված ժամանակը համապատրիարք ընտրելու պաշտոն տրված էր, բայց իրենք այդպես որոշում առեր են եւ առ այդ պետության դիմում կատարեր են 85-րդ պատրիարք, ոչ թե համապատրիարք ընտրելու: Թեեւ համապատրիարք ըսված ժամանակ բոլոր իրավասությունները ունի, ներկա պատրիարքը վախճանելե հետո ինքնաբերաբար կդառնա 85-րդ պատրիարքը:

*Տես էջ 4*

# Մինչեւ ոստիկանը չհետեւի երթեւեկության կանոններին...

Ամբողջ հասարակությունը հակված է կարծելու, թե կոռուպցիայի դեմ պայքարն անհնար է, առավել եւս, անհնար է վերացնել այդ երեւույթը: Փաստաբան **Հայկ Հարությունյանը** համաձայն չէ այս մոտեցմանը, ընդհակառակը, նա խորապես համոզված է, որ կոռուպցիայի դեմ պայքարը հնարավոր է: Երեկ փաստաբանն այս մասին հայտարարեց «Դուրս մղենք կոռուպցիան մեր կյանքից» ծրագրի շրջանակներում կլոր սեղանի քննարկմանը, պարզաբանելով, որ կոռուպցիան միայն կաշառքը չէ, այլ որեւէ պաշտոնական դիրքի օգտագործումը մասնավոր շահերից ելնելով:

Հիշեցնենք, որ ծրագիրն իրականացնում է Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիան ԱՄՆ ՄԶԳ «Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացիա» ծրագրի հետ համատեղ:

Թեեւ Հարությունյանը հիմնականում փաստաբանական գործունեություն է ծավալում առեւտրային եւ տնտեսական իրավունքի ոլորտներում, այնուամենայնիվ, նա նշեց, որ կոռուպցիայի օրինակների համար առանձնակի հեռու գնալ պետք չէ, քանի որ այն առկա է հենց դատական համակարգում: Ավելի հաճախ չկան ուղղակի ապացույցներ, թե այս կամ այն գործում կոռուպցիոն ռիսկեր կան, սակայն կան այդ առնչությամբ հիմնավոր կասկածներ: Ասվածը կարեւորվում է այն պատճառով, որ, փաստաբանի կարծիքով, կոռուպցիայի դեմ ամենաարդյունավետ գործոններից մեկը հավատն է, թե պայքարը հնարավոր է:

Ամեն դեպքում, հակակոռուպցիոն պայքարում մեծապես կարեւոր է նաեւ պայքարն այդ երեւույթի պատճառների դեմ, ուստի լրատվամիջոցների ներգրավվածության, նրանց կողմից կոռուպցիայի նկատմամբ արտաքին վերահսկողության իրականացման հարցում պատճառներին անդրադարձն առավել կարեւոր է, քան կոնկրետ դեպքերն ու դրանց լուսաբանումը:

Այս ամենով հանդերձ ու նաեւ մոտեցմամբ, որ կոռուպցիայի դեմ պայքարը հնարավոր է, Հայկ Հարությունյանը Հայաստանում այդ պայքարի համար մի մեծ խոչընդոտ է տեսնում. կաշառակերությունը Հայաստանում հարմար է գրեթե բոլորին: Օրինակ, ճանապարհային երթեւեկության պարագայում, երբ ոստիկանը կանգնեցնում է վարորդին, վերջինս նախընտրում է կաշառք տալն ու գլուխը պրծացնելը: Ուստի ինչքան էլ անթերի օրենքներ գրվեն, արդյունք ստանալու համար անհրաժեշտ է փոխել հայի մտածելակերպն ու մոբիլիզացնել հանրությանը:

Սա իրագործված տեսնելու համար հարկ է բարձրացնել իրավագիտակցության մակարդակը, որը Հարությունյանը պայմանավորում է ճանապարհային երթեւեկության կանոններին ենթարկվելու ցուցանիշներով: Այստեղ առանձնահատկությունը ճանապարհային երթեւեկության առումով այն է, որ դրանց մարդիկ առնչվում են ողջ կյանքի ընթացքում, ու այդ կանոնների միջոցով է ձեւավորվում վերաբերմունքն ընդհանրապես օրենքի հանդեպ:

Այնուամենայնիվ, ճանապարհային երթեւեկությունն իր մասնակիցներով, ըստ փաստաբանի, յուրօրինակ ցուցանիշ է, հատկապես եթե դիտարկվի, թե ինչպես են իրենց պահում այդ երթեւեկությունը հսկող ոստիկանները: Նրանք, ովքեր կոչված են պահպանելու երթեւեկության կանոնները, իրենք իսկ խախտում են դրանք՝ առանց անհրաժեշտության: Սա հենց այն դեպքն է, երբ իրականությունը թույլ չի տալիս արմատախիլ անել կոռուպցիան:

Հայկ Հարությունյանը երեկ հետաքրքրական մի օրինակ բերեց, որը թեեւ անմիջապես կոռուպցիային չառնչվող վիճակ է, սակայն անուղղակիորեն անգամ կույրը կարող է տեսնել, որ դատական իրականության մեջ նշված գործով ամեն ինչ չէ, որ մաքուր է: Մասնավորապես, արդեն երկրորդ անգամ Արմավիրի առաջին ատյանի դատարանով անցնելուց հետո կրկին վարչական գործերով վերաքննիչ դատարանի վարույթում է հայտնվել, այսպես կոչված, Սարյանների գործը:

Ըստ փաստաբանի, «ՄԱՊ» ընկերության խմիչքների պիտակների վրա են հայտնվել Մարտիրոս Սարյանի մի շարք նկարներ, որոնց հեղինակային իրավունքի պաշտպանության համար էլ Սարյանների ընտանիքը դիմել է դատարան: Գրեթե երեք տարի տեւող դատավարություններում Սարյանների ընտանիքը դեռեւս արդյունքի չի հասել: Գործին ավելի մանրամասն կանդրադառնանք առաջիկայում:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ ԱԺ ԽՈՍՆԱԿԻՆ

# Արձանագրությունների վերաբերյալ քննարկում ԱԺ-ում

**Այսօր ՀՅԴ-ն Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում նախնական քննարկում կանցկացնի հայ-թուրքական Արձանագրությունների վերաբերյալ: ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանի տեղեկացմամբ՝ իրենք ԱԺ նախագահ**



**Հովիկ Աբրահամյանին առաջարկելու են՝ նախքան արտաքին հարաբերությունների հանձնաժողովի եզրակացությունը, հարցն օրակարգ չընդգրկել:**

**Ռուստամյանը բացատրում է, որ դա թույլ կտա բաց քննարկումներից հետո միայն քննարկման առարկա դարձնել Արձանագրությունները, որը նաեւ որոշակի իմաստով կխոչընդոտի Արձանագրությունների այս տեքստով վավերացմանը:**

**«Առաջարկեցինք հատուկ ընթացակարգ մշակել Արձանագրությունների նախնական քննարկումների համար եւ դիմեցինք խորհրդարանի խոսնակին՝ առաջարկելով, որ հանձնաժողովի եզրակացությունը ստանալուց հետո, Արձանագրությունները քննարկման ներկայացվեն խորհրդարանի քառօրյա նիստերից մեկում», նկատեց Ռուստամյանը: Դաշնակցական գործիչը խոստացավ, որ քննարկումներն առավելապես բաց ու թափանցիկ կլինեն:**

**Դիտարկմանը, որ արտաքին հարաբերությունների հանձնաժողովում մեծամասնությունը կոալիցիայի անդամներն են, ցանկության դեպքում կարող են արագ եզրակացություն տալ, ու դա որեւէ խոչընդոտ չի ներկայացնի, դաշնակցական գործիչը հույս հայտնեց, որ եզրակացությունն արագ չի լինի: Մեկնաբանելով նախագահ Սարգսյանի Լոնդոնում կատարած հայտարարությունը՝ «երաշխավորում եմ, որ Արձանագրությունները կվավերացվեն ԱԺ-ում», Ռուստամյանն ասաց, որ հայտարարությունն այդքան էլ ճիշտ չէ եւ չի նպաստում երկրի հեղինակության բարձրացմանը: «Ի՞նչ է նշանակում օրենսդիր մարմնում գործընթացների երաշխավորումը: Սա պարզապես ցուցում է, թե ինչպես պետք է քվեարկություն անցկացնել: Սահմանադրությամբ գործադիր եւ օրենսդիր իշխանությունները տարանջատված են»:**

**Ըստ նրա՝ Հայաստանը կորցնում է իրավիճակի վրա ազդելու հնարավորությունները: Միակ ճանապարհը գործընթացից դուրս գալն է: «Եթե իշխանությունները սպառնում են, որ Հայաստանը կարող է դուրս գալ գործընթացից, ակամա ընդունում ենք, որ Թուրքիան ստանալու բան ուներ: Հայտարարվում է, որ առանց նախապայմանների են Արձանագրությունները: Չի խոսվել այն մասին, որ մենք ինչ-որ բան զիջում ենք: Եթե զիջում եք, բարի եղեք ասել՝ ինչ եք զիջում ժողովրդի հաշվին», ասաց նա՝ միաժամանակ ընդգծելով, որ դեմ են հայ-թուրքական Արձանագրություններին այժմյան տեքստով, սակայն որոշ վերապահումներով կողմ են վավերացմանը:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Խորհրդարանում ծանր քննարկումներ կլինեն

*1-ին էջից*

**Սակայն լուրջ ցանկության դեպքում կարելի էր որեւէ լուրջ, ասենք, գոնե առաջնայնությունները, գլխավոր բացասական ու դրական ազդեցությունները ֆիքսել: Այնպես որ երբեմն սկսում ես չհավատալ մեր քաղաքականների լուրջ մտահոգություններին, քանի որ նրանք կենտրոնացել են Արձանագրությունների քաղաքական ենթատեքստերի վրա, կարծես չպատրաստվելով այն տարբերակի համար, որ եթե, այնուամենայնիվ, հայ-թուրքական սահմանը բացվի, անպատրաստ չլինենք եւ կարողանանք համակարգված դրսեւորվել շուկայում, ու ոչ թե սահմանի բացումը տարերային աղետ դառնա Հայաստանի տնտեսության համար:**

**Երեկ ՀԱԿ-ականան Դավիթ Շահնազարյանն ասում էր, թե միջազգային ատյաններից ստիպելու են, որ Հայաստանն առաջինը վավերացնի հայ-թուրքական Արձանագրությունները, ու շատ մոտիկ ժամանակում, առանց վերապահումների հայոց խորհրդարանը վավերացնելու է դրանք: Մի խոսքով, ըստ Շահնազարյանի՝ երկրի նախագահը միանգամից այս հարցում ընկնելու է արտաքին եւ ներքին ճնշման տակ միաժամանակ, ընդհանրապես՝ հայ-թուրքական նախաձեռնությունը իշխանության հերթական սխալ որոշումն է: Մի կողմ թողնենք սխալն ու ճիշտը՝ սա սովորական ընդդիմախոսություն է բոլոր պարագաների համար, բայց որ խորհրդարանը շատ արագ կվավերացնի Արձանագրությունները, դա, մեղմ ասած, այնքան էլ չի ուրվագծվում: Ստորեւ մի քանի նկատառումներ այդ են վկայում:**

**Նախ, որ ճնշումներ կան եւ դեռ կլինեն, անզեն աչքով էլ տեսանելի է՝ րոպեում 1 անգամ արագությամբ միջին կամ չափավոր կալիբրի արտերկրյա որեւէ պաշտոնյա տարբեր հանդիպումների, սեմինարների, պաշտոնական եւ անպաշտոն ճաշընթրիքների ժամանակ խոսում է այն մասին, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը կօգնի տարածաշրջանային խնդիրների լուծմանը: Նկատենք՝ նա՛խ նկատի ունեն այն երկրի խնդիրները, որոնք իրենք ներկայացնում են: Ու նայած շեշտադրումներին, այդպիսի կարծիքները կարելի է կամ ճնշման ձեւ անվանել, կամ բարեկամական խուտուտ:**

**Սակայն մերոնց ընդդիմախոսու հատվածը շարունակում է շարժվել դիմակայությունների ճանապարհով. ՀՅԴ-ն ԱԺ նախագահին առաջարկելու է հարցը չընդգրկել քառօրյա նիստերի օրակարգ, մինչեւ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից Արձանագրությունները քննարկվեն եւ եզրակացություն ստանան: Չնայած պարզ է, որ ՀՅԴ անդամ Արմեն Ռուստամյանի գլխավորած արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ձայների հարաբերությունն այնպիսին է, որ հազիվ թե դրական եզրակացության համար պրոբլեմ ստեղծվի: Անկախ դրանից, որ ՀՅԴ խմբակցությունն առաջարկում է խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանին եւս այդ հանձնաժողովի կազմում ընդգրկել: Ստացվում է այնպես, որ այդ հանձնաժողովում ինչպիսի քննարկումներ էլ ընթանան՝ դրական կամ ոչ դրական եզրակացությունը կախված է լինելու այս գործընթացը նախաձեռնողից, այն է՝ երկրի նախագահից, որովհետեւ բացի ՀՀԿ-ից, որ ներկայացված է 4 անդամով, մյուս խորհրդարանական ուժերը մեկական անդամ ունեն: Իսկ թե ի՞նչ եւ ո՞ւմ է մանեւրելու հնարավորություն տալու ՍԴ որոշման այն պահանջը, թե Հայաստանի քայլերը պետք է ներդաշնակ լինեն ՍԴ իրավական դիրքորոշման հետ, դեռ էլի հասկանալի չէ՝ արդյո՞ք միայն ընդդիմախոսներին, թե՞ հենց պետությանը: Իշխանական քաղաքական գործիչների տարաբնույթ հայտարարություններից մեկ թվում է, թե հնարավոր է, որ Արձանագրությունները Հայաստանն ավելի շուտ վավերացնի, իսկ Թուրքիայի նազուտուզից հետո օրենք փոխելով հնարավորություն ունենա ստորագրությունը հետ վերցնել, մեկ էլ թվում է, որ չէ, Արձանագրությունները դեռ երկար կպտտվեն ԱԺ-ում: Սակայն այստեղ մի շարք կազուսային պահեր կան. արդյո՞ք ինչպիսի իմպուլսներն են սնում այդպիսի հայտարարություններ, որոնց իրարամերժությունը քաղաքական գործիչներից ոմանց թույլ է տալիս եզրակացնել, թե խնդրում հայեցակարգի, ընդհանուր մոտեցման բացակայություն կա եւ իրավիճակային մոտեցում, այլապես իրար հակասող հայտարարություններ չէին հնչի: Բոլոր դեպքերում վերապահումների հարցը միշտ որ ծագեր խորհրդարանում, քանի որ ՍԴ-ն նույնակերպ օրինակ է տվել: Իսկ թե միջազգային պայմանագրերում կարելի է վերապահում անել, թե ոչ, սա եւս Ազգային ժողովի լուծելիք խնդիրն է, մանավանդ որ պատրաստ է «Միջազգային պայմանագրերի մասին» օրինագծում փոփոխության նախագիծ, այսինքն՝ խորհրդարանը օրենսդրական փոփոխությամբ միայն կկարողանա վերապահում անել: Մնում է, որ ինչպես Սերժ Սարգսյանը դա արեց «Չեթմ Հաուզի» ելույթում, Ազգային ժողովում եւս հակահարված տրվի Թուրքիայի նկրտումներին՝ շարունակաբար Ղարաբաղի խնդրում տեղաշարժով պայմանավորելով Արձանագրությունների ստորագրումը: Եվ եթե անգամ մադրիդյան նորացված առաջարկների եւ հայ-թուրքական Արձանագրությունների միջեւ անտեսանելի կապ կա, էլի խորհրդարանում շատ տեսանելի պետք է այդ կապը ստեղծողներին ուղարկել մի քանի հայտնի հասցեներով՝ խուսափելով մի հարցը մյուսով պայմանավորելու մեկ նուրբ, մեկ կոպիտ ճնշումներից:**

**Մի խոսքով՝ Արձանագրությունների խորհրդարանական քննարկման հատվածը կարող է հետաքրքրական լինել: Ճիշտ է, դա ոմանց երազանքների հանգույն չի կարող բերել ներիշխանական էֆեկտների, սակայն համազգային նշանակության խնդիրը լրջորեն կարող է վնասել կամ բարելավել այս կամ այն գործչի, խմբակցության եւ անգամ առաջին պաշտոնյաների իմիջը: Ալեքսանդր Իսկանդարյանի այն միտքը, թե խնդրի լուծումով շահագրգիռ գերտերությունները հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի վրա լուրջ խաղադրույքներ են դրել, թե չէ միջազգային շրջանակում հարցն այդպիսի հնչեղություն չէր ստանա, նաեւ ֆիքսել առկա պահը, այն է՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում ճգնաժամն ակնհայտ է, գնալով ավելի պարզ է երեւում, որ Թուրքիան մտադիր չէ իր խորհրդարանում վավերացնել Արձանագրությունները:**

**Այս ֆոնին գուցե ճիշտ մարտավարություն է վերապահումները խորհրդարանում, գոնե այս տեքստով նախապայմանների առաջադրումը՝ արթուն, թե քնած Ղարաբաղը տեսնող Թուրքիային: Սա էլ գուցե նախաձեռնողական քաղաքականության մաս կարող է լինել կամ՝ մեր պատասխանը Չեմբեռլենին:**

**Իսկ փետրվար ամիսը որպես կարմիր լաթ տեսնող մեր քաղաքականները ստիպված կլինեն հիասթափվել՝ փետրվարը մոտենում է ավարտին, վերը նշված գործընթացները տեւական են լինելու, այնպես որ հազիվ թե մի քանի օրում մեր քնած երկրում ինչ-որ փետրվարյան հեղափոխություն լինի, նախորդ մի երկու փետրվարների պես, ստիպված պետք է ավանդույթի արթնացման երազանքից հրաժարվեն:**

# Լեզվի տեսչության ղեկավարը հրաժարական է տվել

Լավրենտի Միրզոյանի հրաժարականի լուրը հաստատել է Հայաստանի կրթության նախարարությունը: Իսկ համաձայն «Նյուզ.ամ» կայքի, լեզվի պետական տեսչության նոր ղեկավար կարող է դառնալ Սերգո Երիցյանը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 2/18/2010 10:16 PM Page 1



ԱԶԳ Անդրադարձ

# Քաղաքականության մեջ պետք չէ հավատալ ամեն բառի

Հասկանալի է, որ տարածաշրջանի համար անչափ կարեւոր է Հայաստան-Թուրքիա բաց սահմանը: Հասկանալի է նաեւ, որ տարածաշրջանով հետաքրքրված բոլոր երկրները, նախ եւ առաջ գերտերությունները՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը եւ Եվրոպան, իրենց ուշադրության կենտրոնում են պահում այս գործընթացները, մասնակցում են, ճանապարհներ ցույց տալիս: Ընդ որում, ինչպես նկատում է քաղաքագետ **Ալեքսանդր Իսկանդարյանը**, պատմության մեջ եզակի անգամ, տարածաշրջանին վերաբերող հարցում բոլոր հիմնական ուժերը միակարծիք են. Հայաստանն ու Թուրքիան պետք է ունենան նորմալ հարաբերություններ՝ բաց սահմանով: Սակայն Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչ **Դավիթ Շահնազարյանի** մեկնաբանմամբ՝ հայ-թուրքական գործընթացների նախաձեռնությունը բացառապես Մոսկվայինն է: Շահնազարյանն իր կարծիքը հիմնավորում է, որ նախագահ Սարգսյանն առաջին անգամ հենց Մոսկվայում բարձրաձայնեց գործընթաց սկսելու առաջարկությունը: Ընդ որում, ՀԱԿ ներկայացուցիչն այժմ էլ նկատում է, որ Ռուսաստանին ամենեւին էլ պետք չէ հայ-թուրքական բաց սահմանը. «Մոսկվային պետք են միայն ստորագրված Արձանագրությունները, եւ նա դրան հասավ, այժմ էլ ռուսական կողմը ակտիվություն չի ցուցաբերում այս հարցում», նկատեց Շահնազարյանը: Ալեքսանդր Իսկանդարյանը, սակայն, չի կարծում, որ Մոսկվան «հետ է քաշվել» այս գործընթացից. «Աշխարհի հիմնական ուժի կենտրոնները ուզում են սահմանի բացումը, պարզապես նրանցից յուրաքանչյուրը տարբեր ձեւերով է դա ուզում: Նրանք բավականին տարբեր են, հետեւաբար նրանց միջոցներն են տարբեր», ընդգծեց Իսկանդարյանը՝ հավելելով, որ եթե Ռուսաստանը իրոք դեմ լիներ հայ-թուրքական բաց սահմանին, ապա կկարողանար խոչընդոտել գործընթացին, քանի որ ունի բոլոր անհրաժեշտ հնարավորությունները մեր տարածաշրջանում. «Սակայն չմոռանանք՝ Լավրովը հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում էր», հիշեցրեց քաղաքագետը:

Մյուս գերտերությունը, որը, մեղմ ասած, հետեւում է հայ-թուրքական գործընթացին, ԱՄՆ-ը, ըստ Դավիթ Շահնազարյանի ակնհայտ է, որ «ո՛չ մինչեւ ապրիլի 24-ը, ո՛չ հաջորդ տարի, ո՛չ էլ տեսանելի ապագայում» չի ճանաչելու Հայոց ցեղասպանության փաստը: Շահնազարյանի կարծիքով, Վաշինգտոնը չի գնա այդ փուլին, քանի որ չի ցանկանա ճնշել Թուրքիային. «Պաշտոնական չէ նաեւ Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ այս տարվա ապրիլի 14-ին ԱՄՆ կատարելիք այցելությունը. միանշանակ է, որ ԱՄՆ-ը չի գնա ցեղասպանության ճանաչմանը, նա դա կանի միայն Թուրքիայից հետո», շեշտեց ՀԱԿ ներկայացուցիչը:

Սակայն, որ Նահանգները ճնշում է Անկարային եւ ունի դրա համար միջոցներ՝ անկարելի է չնկատել: Հակառակ պարագայում, ինչո՞ւ պետք է մարտի 4-ին ցեղասպանության դատապարտման բանաձեւ մտնի Կոնգրես: Իսկանդարյանն այս վերջինի մեջ տեսնում է ե՛ւ ԱՄՆ-ում հայկական լոբբիի աշխատանքի արդյունավետությունը, ե՛ւ, իհարկե, ԱՄՆ-ի կողմից Թուրքիային ճնշելու մտադրությունը: «Եկեք չմոռանանք, որ Վաշինգտոնը հայ-թուրքական գործընթացի «հովանավորներից» է, իսկ թուրքական կողմի հապաղումը՝ արդյունավետ ընթացք տալու գործընթացին, բնականաբար ԱՄՆ-ի «սրտով» չէ», նկատեց քաղաքագետը: Իսկ եթե մինչեւ ապրիլի 24-ը Թուրքիան շարունակի իր ներկա դիրքորոշման պնդումը, ապա. «Ես չեմ կարծում, որ Օբաման ապրիլի 24-ին կարտասանի հենց ցեղասպանություն բառը, ինչ-որ մի բառ կգտնի, բայց դժվար թե լինի ցեղասպանություն բառը», ասաց Իսկանդարյանը՝ սա պայմանավորելով այն հանգամանքով, որ Հայոց ցեղասպանությունը ԱՄՆ-ի համար Անկարային ճնշելու միջոց է, հետեւաբար, եթե Օբաման արտասանի «այդ բառը», ապա Վաշինգտոնը կկորցնի այդ խիստ անհրաժեշտ միջոցը: «Բացի այդ, նկատենք, որ ԱՄՆ նախագահի հայտարարությունը որեւէ իրավական արժեք չի ներկայացնում. հիշենք, որ նախագահ Ռեյգանը, իր ելույթում ապրիլի 24-ի իրադարձությունները հենց ցեղասպանություն էր որակել, ե՞ւ», նշեց քաղաքագետը:





Իսկ Հայաստանը, որը, Դավիթ Շահնազարյանի խոսքերով, ընդամենը օբյեկտ է այս գործընթացներում, պարզապես գնում է Լեւոն Տեր-Պետրոսյանի նախանշած ճանապարհով. «Առաջին նախագահը վաղուց էր ասել, որ միջազգային ուժերի ճնշման տակ Հայաստանն առաջինը կվավերացնի Արձանագրությունները, այսօր հենց այդ գործընթացներն են ընթանում», ասաց Շահնազարյանը: Իսկանդարյանի կարծիքով էլ Երեւանը կարող է Թուրքիայից շուտ վավերացնել Արձանագրությունները՝ դրանով իսկ ցույց տալով, որ «Հայաստանն արեց ամեն ինչ, իսկ Թուրքիան՝ ոչ»: Ըստ քաղաքագետի՝ այս քայլով Հայաստանը կարող է ազդել Անկարայի վրա, չնայած Թուրքիայում վերջերս ունեցած իր հանդիպումներից Իսկանդարյանը եզրակացրել է, որ գործընթացը կանգ է առել. «Գրեթե բոլորն այնտեղ ասում էին՝ վերջ, եւ, կարծում եմ, եթե նույնիսկ մեր ԱԺ-ն «առաջ անցնի» Մեջլիսից, ապա Անկարան էլի մի բան կգտնի: Կարեւորն այստեղ ցանկությունն է, իսկ թուրքական կողմից կլինի այն, թե՞ ոչ, ես չեմ կարող ասել», նշեց քաղաքագետը:

«Մյուս հայ-թուրքականից»՝ Ղարաբաղի հակամարտությունից խոսելիս Դավիթ Շահնազարյանը նկատեց, որ այժմ կարող են ընթանալ Մինսկի խմբի ֆորմատի փոփոխություններ. «ԵԱՀԿ նախագահող Ղազախստանը տարածաշրջան բերեց հակամարտության լուծման սեփական երկրի առաջարկությունները, իսկ մենք որտեղի՞ց պետք է իմանանք՝ այդ առաջարկությունը համաձայնեցվա՞ծ է արդյոք Մինսկի խմբի համանախագահների հետ», նկատեց Շահնազարյանը: Քաղաքագետ Իսկանդարյանի կարծիքով, սակայն, որպեսզի փոխվի Մինսկի խմբի ֆորմատը, ապա դրա համար միայն մեկ, թեկուզ ուժեղ եւ ազդեցիկ երկրի ցանկությունը բավական չէ. «Ես դա անհնար եմ համարում», ասաց Իսկանդարյանը, որի համար անհնար է նաեւ հայ-ադրբեջանական պատերազմի վերսկսումը, քանի որ Ադրբեջանում չկան պատերազմում հաղթելու նվազագույն հույսեր: «Պատերազմի ադրբեջանական սցենարը հետեւյալն է. նրանք պետք է մի քանի օրվա մեջ հասնեն Հայաստանի սահմանին՝ տեղահանելով ԼՂՀ բնակչությանը, սակայն դա զուտ տեխնիկական առումով անհնար է, իսկ ինչո՞ւ մի քանի օրվա ընթացքում, որովհետեւ նախ «երկար պատերազմել» ոչ ոք թույլ չի տա, ապա նաեւ Բաքվում էլ հստակ գիտակցում են, որ երկարատեւ պատերազմը տնտեսական հսկա ճգնաժամի կբերի, որն, իհարկե, չի կարող լինել Ադրբեջանի շահերից», եզրակացրեց Իսկանդարյանը:

Վերջում խոսելով Հայաստանի գործոնի, տարածաշրջանում նրա ունեցած դերի մասին՝ Շահնազարյանը նշեց, որ մեր երկիրն ընդամենը «օբյեկտ է, ոչ, թե սուբյեկտ, եւ գնում է միակողմանի զիջումների»: Իսկանդայանի կարծիքով՝ հայ-թուրքական սահմանի բացումից հետո էլ ավելի կմեծանա Հայաստանի դերը: Հայաստանը լուրջ հետաքրքրություն, ըստ քաղաքագետի, առաջացրել է նաեւ այսօր. «Էլ ե՞րբ եք տեսել, որ համաշխարհային ուժերն այսքան խոսեն ու հայտարարություններ անեն Հայաստանի վերաբերյալ եւ աշխարհի խոշոր լրատվամիջոցներն այսքան անդրադառնան մեր երկրին», նկատեց քաղաքագետը: Իսկ տարբեր քաղաքական հայտարարություններին Ալեքսանդր Իսկանդարյանը հետեւյալ կերպ խորհուրդ տվեց վերաբերվել. «Քաղաքականության մեջ պետք չէ հավատալ ամեն բառի»:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Հ.Գ.-Ի դեպ, ՀԱԿ անդամ Դավիթ Շահնազարյանը նաեւ տեղեկացրեց, որ «Մարտի 1»-ի գործի առնչությամբ Հաագայի միջազգային դատարան՝ ընդդեմ Ռոբերտ Քոչարյանի, իրենց հայցը 2-3 շաբաթից կուղարկվի:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

# Ջավախք. լինե՞լ, թե՞ չլինել

*1-ին էջից*

Վարդանյանը նշեց, որ ազգային փոքրամասնությունները Վրաստանում երկու ճանապարհ ունեն՝ կամ ուծացում, կամ միգրացիա: Ջավախքում ուծացման միտումները ուժեղ չեն, բայց երկրից հեռացողներն են շատ, իսկ թիֆլիսահայ համայնքում 90-ականներին արդեն որոշ մասը հեռացել էր, ու հիմա ավելի ուժեղ են ուծացման դրսեւորումները: Ամեն դեպքում, թիֆլիսահայ համայնքում, օրինակ՝ Հավլաբարում, վրացական Սամեբա եկեղեցու կառուցումից հետո հայերը գնում են վրացական եկեղեցի, եւ ըստ Վարդանյանի, միայն դրանով չէ, որ Թբիլիսիում հայերը պասիվ են. նրանք մեծ մասամբ անտեղյակ են Ջավախքի խնդիրներից կամ տեղեկանում են վրացական լրատվամիջոցների խեղաթյուրված տեղեկատվությամբ:

Փորձագետի մատուցմամբ, լրջագույն խնդիր է մնում լեզուն, հայկական դպրոցների վերացման խնդիրը, նաեւ հայերենով դպրոց ավարտողների համար զգալի դժվարությունը՝ ապագայում սոցիալականացվելու: Իսկ պնդումները, թե Ջավախքում չգիտեն վրացերեն, ու ամենի պատճառը դա է, փորձագետը հակադարձում է, թե թիֆլիսահայերը գիտեն վրացերեն, բայց դա նրանց չի փրկում:

Մյուս կողմից, Վարդանյանն առանձնացրեց երկու հիմնական գործոն, որոնց շնորհիվ Ջավախքը դեռ չենք կորցրել. ջավախքցին ապրում է իր պատմական հայրենիքում ու կառչած է նրան, բացի այդ, այս տարածաշրջանում ծանր բնակլիմայական պայմաններ են, որոնցում բոլորը չէ, որ կապրեին:

Հայաստանի քաղաքականությունը Ջավախքի խնդրի նկատմամբ ներկայացրեց «Միտք» վերլուծական կենտրոնի փորձագետ **Հրանտ Մելիք-Շահնազարյանը**: Նրա վկայությամբ, վերջին տասը տարիներին Վրաստանում կատարված սոցհարցումներով, Հայաստանը գլխավոր սպառնալիք է համարվել, եւ միայն ռուս-վրացական պատերազմից հետո Հայաստանը հայտնվել է երկրորդ տեղում՝ առաջինը զիջելով Ռուսաստանին: Հայաստանն էլ, իր հերթին, ըստ փորձագետի, Ջավախքին վերաբերվում է որպես սփյուռքի մի մասնիկի, այլ ոչ որպես իր պատմական հայրենիքում ապրող հայության:

Թե ջավախահայության իրավունքների պաշտպանություն խնդիրը միջազգային ատյաններում ինչ վիճակում է, ներկայացրեց «Երկիր» միության փորձագետ **Ռոբերտ Թաթոյանը**: Նրա վստահեցմամբ, միջազգային կազմակերպությունների կողմից վրաց իշխանությունների առջեւ հստակ պահանջներ են դրված ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության առումով: Տարբեր միջազգային կառույցներ, այդ թվում՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը կամ Եվրախորհրդի խորհրդակցական կոմիտեն հորդորում են վրացական իշխանություններին լուծում տալ Վրաստանի հայ փոքրամասնության խնդիրներին՝ վերադարձնել հայկական տաճարները, կարգավիճակ տալ Հայ առաքելական եկեղեցուն, վերացնել լեզվական խտրականությունը եւ այլն:

Չնայած այս ամենին, ըստ Թաթոյանի, միջազգային կազմակերպությունները, չհանդուրժելով փոքրամասնությունների իրավունքների ոտնահարումները, այնուամենայնիվ, քայլեր չեն ձեռնարկում, ու այդ առումով անհրաժեշտ է, որ հայաստանյան ու սփյուռքյան կառույցները ճնշում բանեցնեն այդ կառույցների հանդեպ՝ դիմելու գործնական քայլերի:

**Հ.Գ. Սեմինար-քննարկման արդյունքը հայտարարությունն էր, որի նախագիծը ներկայացվել էր հանդիպման մասնակից քաղաքական ուժերին ու գործիչներին, որոնցից շատերը երեկ արդեն իսկ նշեցին հայտարարությանը միանալու մասին: Համատեղ հայտարարությունն ու մասնակից ուժերին կներկայացնենք հաջորդ համարում:**

# Արցախում պատրաստվում են խորհրդարանական ընտրությունների

ԼՂՀ խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ միաձայն ընդունեց ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններն ու լրացումները: Մինչ այդ, առաջին ընթերցումից հետո, արտախորհրդարանական քաղաքական ուժերի մասնակցությամբ եւս կազմակերպվել էին խորհրդարանական լսումներ՝ ամփոփելով արված առաջարկությունները:

Ինչպես ԱԺ նիստում նշեց ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ **Սերգեյ Նասիբյանը**, առաջին ընթերցումից հետո տեղի ունեցած քննարկումների արդյունքում 8 պատգամավորական առաջարկություններ են ստացվել, որոնց մեծ մասը ընդհանուր հավանության է արժանացել: Փոփոխված օրենքով, մասնավորապես, համամասնական ընտրակարգով հանդես եկող կուսակցությունների համար ընտրական գրավը սահմանվում է 500.000 դրամ՝ նախկին 250.000-ի փոխարեն, իսկ կուսակցությունների դաշինքի պարագայում, դաշինքի անդամ կազմող յուրաքանչյուր կուսակցության հաշվով, 350.000 դրամ: Կրկնակի ավելացել է մեծամասնական ընտրակարգով առաջադրվող պատգամավորական թեկնածուի ընտրագրավի չափը՝ 100.000 դրամ:

Փոխվել են նաեւ ընտրական շեմի պարտադիր տոկոսաչափերը. համամասնական ընտրակարգի դեպքում կազմում է 6 տոկոս՝ նախկին 10-ի փոխարեն, իսկ կուսակցությունների դաշինքի 15 տոկոսը դարձել է 8: Դա ԼՂՀ-ում գործող մյուս կուսակցություններին թերեւս նույնպես հնարավորություն կտա հավակնելու խորհրդարանական տեղերի, թեպետ ներկա դրությամբ հանրապետության քաղաքական ներկապնակը, ակտիվ քաղաքական դերակատարության առումով, հիմնականում ներկայանում է խորհրդարանական ուժերի միջոցով :

Խորհրդարանական ընտրություններն Արցախում տեղի կունենան այս տարվա մայիսի 23-ին: Նախորդ ընտրություններն աչքի էին ընկել քաղաքական ուժերի միջեւ մրցակցային ընդգծված լարվածությամբ, եւ թե ընտրապայքարի ինչ մթնոլորտ կձեւավորվի նոր իրողությունների պայմաններում՝ պարզ կդառնա արդեն առաջիկա ամիսներին:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

# Էմմիին ու Միհրանին ...

*1-ին էջից*

Ըստ Էմմիի, մրցույթով ընտրվելու էր միայն երգը: Մասնակցության մասին մրցույթի վերաբերյալ խոսակցությունները սկսվել են վերջին մեկ ամսում: Երբ Միհրանը փորձել է ճշտել, թե կարո՞ղ է այնպես պատահել, որ իրենք մասնակցեն ու չհաղթեն, կազմակերպիչները նրանց 99.9 տոկոսանոց հաղթանակ են խոստացել:

Էմմիի խոսքերով՝ սա առաջին դեպքը չէ, երբ Հանրային հեռուստաընկերությունն իր հետ այդպես է վարվում: Ինչ վերաբերում է փետրվարի 14-ին բեմից ցուցադրաբար հեռանալուն, երգչուհին ասել է, որ դա ուղղված չէր Եվա Ռիվասի դեմ: Բողոքն ու վրդովմունքն ուղղված էին Հանրային հեռուստաընկերության դեմ:

Եվրոտեսիլյային կրքերը բուռն կերպով քննարկվում են նաեւ ադրբեջանական մամուլում: Ադրբեջանական բլոգները լցված են Եվա Ռիվասի մասին հոդվածներով ու լուսանկարներով: Բլոգերներից մեկը նրան անվանել է «Ռուբլյովկայի թագուհի», որ իր բախտը փնտրում է երեւանյան բեմերում: Եթե վերաբերմունքը երգչուհու հանդեպ տարբեր է՝ ոմանք նրան համարում են լավ երգչուհի, ոմանք միջին մակարդակի, մնացածին էլ հետաքրքրում է Ռիվասի հասակը, ապա երգի առումով նրանք ունեն ընդամենը մեկ կարծիք՝ այն ադրբեջանական եւ թուրքական երաժշտությամբ համեմված ստեղծագործություն է: Ադրբեջանցիների այս վարվելակերպը զարմանալի չէ, եթե նրանք հայկական երաժշտական գործիքներն ու պարերն են սեփականաշնորհում եւ ներկայացնում ադրբեջանական, ապա «Apricot stone»-ն էլ, որը խոստովանենք, քիչ կապ ունի հայկականի հետ, ադրբեջանցիները պետք է իրենցով անեին, մանավանդ որ հայկական երգը Օսլոյում մրցակցելու է ադրբեջանականի հետ:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, դեռ հայտնի չէ, թե ով է մեկնելու Օսլո: Կազմակերպիչները փաստում են, որ պատրաստ են ծախսել մի քանի միլիոն դոլար, որպեսզի Ադրբեջանի ներկայացուցիչը լավ ելույթ ունենա: Նրանք մտադրվել են հաղթողին ուղարկել Շվեյցարիա կամ եվրոպական որեւէ այլ երկիր՝ որտեղ մասնագետների խումբը նրան սովորեցնելու է ճիշտ խոսել լրագրողների հետ, բեմի վրա ներկայանալ ու պարել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Գարեգին արք. Բեկչյան. «Կմաղթեմ, որ ժողովուրդի մեծ մասը մասնակցի ընտրություններուն»

1-ին էջից

**- Ինչպե՞ս պիտի կարողանա նոր պատրիարքը պոլսահայության սերը նվաճել: Ինչպիսի՞ խոստումներ եք տալու Ձեր ընտրողներին, որ կստիպի 3 թեկնածուներից նախապատվությունը հենց Ձեզ տալ:**

- Այդպիսի հանձնարարություն, թելադրություն ես ինքս չեմ կրնար ընել եւ իրավունք ալ չունիմ ընելու: Քանի որ բոլոր թեկնածուները Հայաստանյայց առաքելական եկեղեցին կներկայացնեն եւ արժանավոր եկեղեցականներ են, հետեւաբար մեկը մյուսեն պակաս չէ: Իսկ ինչ կվերաբերի Մեսրոպ պատրիարքի տեղը լեցնելու կարողության, պետք է ըսել, որ ամեն եկեղեցական իր արժեքը, իր կարողությունները ունի, անշուշտ է՝ ոչ մեկը մյուսին չի նմանիր, բայց կրնա ըլլալ, որ պաշտոնը ստանձնելե հետո նաեւ իր կարողությունները մեջտեղ դնելով վերադարձնե ժողովուրդին սերը եւ համակրանքը, կարենա ունենալ եւ թիկունքը նաեւ: Ուրեմն եկեղեցական ամեն մի թեկնածու իր կարողությունները մեջտեղ պիտի դնե անշուշտ:

**- Կա՞ այդպիսի հնարավորություն մինչ ընտրությունը արժանիքներն ի ցույց դնելու:**

- Մինչեւ ընտրություն չէ, ընտրութենեն հետո իր արժանիքները մեջտեղ պիտի դնե: Մինչեւ ընտրություն չենք կրնար, գործունեությամբ է, որ կդրսեւորվի: Միայն կարելիություն կա երեք թեկնածուները ներկայանան ժողովրդին, ինչպես ես օրեր առաջ գացի Պոլիս, քարոզներ տվի, հանդիպումներ ունեցա, ժողովուրդը հարցումներ տվավ, պատասխանեցի: Եվ պետք է ըսեմ, որ այս ընտրությունը կուսակցական ընտրության պայքար մը չէ: Մրցում մըն է, որ կշահիս կամ կկորսնցնես:

**- Ինչո՞վ նման չէ կուսակցական ընտրության:**

- Կուսակցական ընտրությունը այնպիսին է, որ խոստումներ կտրվի ժողովուրդին՝ այս պիտի ընեմ, այն պիտի ընեմ, թեեւ անոնց երկու երրորդը չեն իրականանար, սակայն այնպիսի պայքար կտարվի, մեկը մյուսին կնվաստացնե: Մեր եկեղեցական մրցումին մեջը այսպիսի բաներ գոյություն չունին եւ պետք չէ ըլլան: Ադիկա պատիվ կբերե ո՛չ եկեղեցիին, ո՛չ եկեղեցականության, ո՛չ ալ ժողովրդի խաղաղության: Հետեւաբար պետք է հանդարտ, ներդաշնակ պայմաններու մեջ ընտրություն մը կատարվի: Ժողովուրդը մոտեն ճանչնա անձերը եւ ադոր համապատասխան իր կարծիքը հայտնե:

**- 10 օրը բավարա՞ր էր ընտրողներին Ձեր ծրագրերին ծանոթացնելու առումով:**

- Եթե ուզեի ամիս մը մնալ, կմնայի: 10 օրը բավարար չէ, անշուշտ: Նորեն երթալու կարելիություն մը կա, այսինքն արգելք մը չիկա որեւէ մեկու կողմեն: Հետեւաբար եթե ժամանակը, կարելությունը ունենամ տրամադրել, պիտի երթամ նորեն այն անձերուն կամ այն խումբերուն հետ տեսնվելու, որոնց չկրցա հանդիպիլ:

**- Ձեր կարծիքով, բավարար ճանաչո՞ւմ եք պոլսահայ համայնքը:**

- Որքան նախկին փորձառությունս (30-35 տարի առաջ) ունիմ, այդ չափով կճանչնամ, բայց անշուշտ համայնքը, մտածելակերպն ալ փոխվեցավ: Կառավարության կողմեն ալ այդպես է: Բայց ինչ հարցեր որ կան այնտեղ, անոնց հետեւեցա թերթեր կամ հեռուստացույցի հայտագիրներու միջոցավ: Այնպես որ տեղյակ եմ ինչ հարցեր կան:

**- Ո՞րն է պոլսահայության գլխավոր մարտահրավերն այսօր:**

- Բավական տարբեր են: Առաջնային՝ պետք է աշխատություն տարվի նախ պատրիարքությունը իրավական անձ դարձնելու: Որովհետեւ այդ կարելիությունը, որ ուներ ժամանակին, վերցվեցավ 1960-ին: Հիմա ադիկա աշխատանք մըն է, որ կրնա երկար ժամանակ առնել:

**- Մեսրոպ սրբազանը զբաղվե՞լ է այդ աշխատանքով:**

- Այո, փորձել էր, բայց տեղ մը չէր հասած, արդյունք մը չէր տված:

**- Ինչո՞ւ:**

- Ժամանակ ալ չունեցավ այդ աշխատանքը տանելու: 10 տարիներ միայն կրցավ պաշտոնավարել: Գիտեմ, որ ծրագիր մը կպատրաստեր, բայց թե ադիկա կառավարության հանձնե՞ց, բանակցություններ տարա՞վ, ադկե տեղյակ չեմ: Բայց ժողովուրդին ցանկությունը կա մեջտեղը, որ ադիկա անպայման կուզեն իրականանա:

**- Դուք կարո՞ղ եք այն իրականացնել:**

- Չեմ գիտեր, ադիկա կառավարութենեն կախում ունի: Կարող եմ, եթե այստեղի պայմանները ըլլան: Բայց այդտեղի քաղաքական պայմանները դյուրալի են կամ ոչ, ադիկա պիտի տեսնենք: Պետությունը պատրիարքը կճանչնա իբրեւ պաշտոնական անձ եւ համայնքի պաշտոնական ներկայացուցիչը, հետեւաբար թե՛ աշխարհիկ, թե՛ կրոնական պարտականությունները պատրիարքի վրա կկենտրոնանան, հակառակ որ իրավական, օրինական պայմանները ալ թույլ չեն տար, որ պատրիարքը միջամտություններ կատարե այդ բոլոր աշխարհիկ աշխատանքներուն: Օրինակի համար, դպրոցներու հարցեր կան, որոնց պատրիարքը պաշտոնապես ուղղակի միջամուխ չի կրնար ըլլալ, որովհետեւ դպրոցներու կանոնադրությունները, հոգաբարձությունները առանձին միավորներ են: Մյուս կողմեն ալ ուրիշ մարմին մը չիկա հակակշռելու, հետեւաբար այս երկու խնդիրները իրարմե զանազանելու, զատելու եւ յուրաքանչյուրին համապատասխան կանոնադրություններ մեջտեղ բերելու աշխատանք մը պետք է անպայման տարվի: Ասիկա անհրաժեշտություն մը կտեսնվի: Հետո դպրոցի, ուսուցիչներու մակարդակի հարցեր կան, ասոնք կարելի է լուծել դյուրությամբ, երբ որ համապատասխան անձերը կգտնեք, դաստիարակչական աշխատանք կտանիք, համապատասխան կազմակերպություն ալ գոյություն ունի, օրինակ ուսուցչաց միություն մը կա, որ կարելի է կուրսեր կազմակերպել, նաեւ Հայաստանի հետ հարաբերություն ունենալով այդտեղի կրթական միջոցներեն օգտվիլ, թե՛ դասագիրքերու, թե՛ ուսուցիչներու կողմե՝ փոխանակություններ ընելով:

**- Ասել է, թե առաջնային մարտահրավերը կրթական ոլորտը բարեկարգելն է:**

- Անշուշտ: Որովհետեւ լեզուն հետզհետե կորսվելու վրա է, լեզուն հոս ալ կկորսվի, բայց հոս դպրոց չիկա, հոն դպրոցները գոյություն ունին, բայց դպրոցներուն մեջ հնարավորությունը չստեղծվիր՝ ուսուցիչներն ալ լավ հայերեն չեն գիտեր, ադ ալ կա:

Հետո կալվածքներու հարցեր կան, անոնք պիտի արժեւորվին: Բավական երկար տարիներ կառավարությունը բռնագրավեց կալվածքները, ուրեմն հիմա նոր օրենքներու համաձայն կամաց-կամաց ետ տրվիլ սկսան: Ետ տրվելեն հետո պետք է եկեղեցական վարչություններու կողմե արժեւորվին, նախ պետք է նորոգվին, համապատասխան վարձու մարդիկ գտնենք եւ անոնց տրվի, հետո այդ կալվածքներեն գալիք եկամուտները պետք է հավասար եւ ներդաշնակ բաժնվին այդ կազմակերպություններուն ի նպաստ:

**- Սրբազան հայր, Ձեզ պոլսահայությունը ճանաչո՞ւմ է:**

- Չեմ գիտեր: Ադիկա ճանչնալ այնպիսի հանգամանք մըն է, երբ որ եկեղեցիով կհետաքրքրվիք, այն ատեն Ձեր եկեղեցականները կճանչնաք: Բայց եթե եկեղեցիով չեք զբաղվիր, չեք ճանչնար: Հավատք ալ չունիք եթե, որքան ծանոթացնենք մենք մեզի, նորեն անտարբեր եք: Այնպես որ շատ պայմանական է ճանչնալը: Իմ աշխատանքներս ամեն տեղ՝ ասդին, անդին, ամեն տեղ հայտարարված, գրված են, հետաքրքրվողները եթե կարդան, կրնան գաղափար մը կազմել: Ադիկա անշուշտ կրնա ոչ անպայման դրական, ժխտական ալ տպավորվիլ, բայց համենայնդեպս մեջտեղն է գործը:

**- Պոլսում Ձեր հանդիպումների ժամանակ ամենաշատը ո՞ր հարց էին ուղղում:**

- «Ի՞նչ կմտածեք ընել պատրիարք ըլլալե հետո»: Այն մարտահրավերները, որոնց մասին խոսեցա: Առաջին հերթին գործս ադ պիտի ըլլա, որ անոնց վրա կենտրոնանք: Ամեն տեղ, անշուշտ հավատքի նահանջ մը տեսա: Հայերը եկեղեցի կերթան՝ առանց հավատք ունենալու: Կերթան՝ իբրեւ հայկական վայր, ուր իրարու պիտի հանդիպին:

**- Ինչպե՞ս պիտի դարձի բերեք նրանց:**

- Շատ զորավոր քարոզչություններու միջոցավ: Եկեղեցականներ կան, անոնց պիտի աշխատանքի լծել եւ քարոզչությունն այնպես ընել, որպեսզի ժողովուրդին հավատքը վերականգնվի:

**- Համեմատելով գերմանահայ համայնքին, կարելի՞ է արձանագրել, թե այստեղ ավելի շատ է թիվն այն մարդկանց, ովքեր հավատքով են եկեղեցի գալիս:**

- Գերմանիա խնդիրը հավատքի հարց չէ միայն, այստեղ հեռավորություններն ալ տարբեր են. հիմա եկեղեցի գալու համար 30, 40, երբեմն 50, 100 կմ պիտի կտրեք, իսկ Պոլսո մեջ ամեն թաղի մեջ արդեն եկեղեցի կա՝ 30-35 հատ: Հայերն ալ ադ թաղերուն մեջ արդեն կբնակին: Այնպես որ այնտեղ ադ հեռավորությունները չիկան, հետեւաբար եկեղեցիներու հաճախելիությունն ավելի շատ է, բայց հավատքի խնդիրը տկար է, պետք է ադիկա շեշտենք: Ամեն տեղ ադպես է, հոս ալ ադպես է: Հոն թեեւ հավատացյալներու թիվը բավական մեծ է, օրինակ գիշեր մը թաղամասի եկեղեցիին մեջ ժամը ութուկես- իննեն հետո 350 հոգի հավաքված էր կրոնական քարոզ մը մտիկ ընելու համար: Կարելի չէ Գերմանիո մեջ ադ թիվը հավաքել: Շաբթվա մեջ մանավանդ ադ ժամերուն եթե անանկ կոչ մը ընեք, ժողովուրդը Ձեր վրա կրնա խնդալ:

**- Սրբազան հայր, հավատքի պակասը պայմանավորված չէ՞ արդյոք ուսյալ, կրթյալ եկեղեցականների պակասով նաեւ:**

- Կրնա ըլլալ: Անհրաժեշտ է, որ այդ պատրաստությունն ունենան, բայց եթե համեմատենք Գերմանիո հետ, կտեսնենք, թե բոլորովին ուրիշ տեղ է խնդիրը: Հիմա հոս մեծ թիվով գերմանացի եկեղեցականներ կան՝ բողոքական, կաթոլիկ, մեծամասնությունը աստվածաբանության դոկտորայի տիտղոս ունին, իրենց եկեղեցիները ի՞նչ վիճակի մեջ են, նույնիսկ եկեղեցիները կծախեն, հետեւաբար եկեղեցականներու տկար պատրաստությունը չէ, որ դեր կխաղա, այլ աշխարհի տարբեր պայմանները: Պետական տարբեր շարժումներ կան, հեռուստացույց կա, աս կա, ան կա, այնպես որ այդ բոլորը դեր կխաղան, որ ժողովուրդին ուշադրությունը տարբեր տեղ կենտրոնանա: Մնաց որ մերին ժողովուրդն ալ իր զավակներն անպայման դեպի եկեղեցականություն քաջալերողը չէ: Ընդհակառակը՝ հակառակ կեցող եւ արգիլող դիրք մը բռնած է այսօր. ցավալի է, որովհետեւ ան ալ թե՛ հավատքի պակասեն, թե՛ անգիտակցության: Կկարծեն, թե եկեղեցական ըլլա, դեպի մահ կերթա: 40-45 տարվա մեջ հաստատեր եմ, թե ընտանիք մը իր տղա զավակը ավելի դյուրին պատերազմ կղրկե, քան եկեղեցական ըլլալու: Դժբախտություն է ասիկա, եւ ասիկա ժողովուրդի անգիտակցության հետեւանքն է:

**- Նո՞յնն է պարագան նաեւ Պոլսում:**

- Ամեն տեղ: Որովհետեւ այսօր բացի Հայաստանեն ուրիշ տեղ թեկնածու չիկա: Հայաստան ալ թեկնածուների բավական թիվ կա հիմնականին, ան ալ տնտեսական պայմաններու հետ կապված է: Հայաստանի ժողովուրդին մեծ մասի տնտեսական վիճակը վատ է, ուրեմն վանք կղրկեն, որպեսզի իրենց զավակը տեղ մը հասնի, կարիեր մը ընե: Քանի մը զավակներուն մեջեն գոնե մեկ հատը փրկվի: Քանի-քանիներ եկեղեցական ըլլալեն վերջն ալ հրաժարեցան:

**- Դուք ինչպե՞ս ընտրեցիք այս ուղին:**

- Մեր ժամանակը տարբեր էր, իմ հորս, մորս հավատքի փոխանցումը ինծի եղավ: Երկուքն ալ Թուրքիայեն են, մեկն Անկարայեն, մյուսը Անկարայի մերձակա տեղեն մը:

**- Ցեղասպանության ողբերգության ականատե՞ս են եղել:**

- Անշուշտ, ապրած են ամենն ալ: Ամբողջ ընտանիքը ջարդված է, պատահմամբ իրենք ազատեր են: Մորս հավատքը եւ եկեղեցի զիս տանելու՝ եկեղեցի երթալով հայկական շրջանակի մեջ մնալու գիտակցությունը, ինչ որ այսօր եվրոպաբնակ մեր ժողովուրդի մոտ չիկա, ազդեցություն ձգած է:

**- Սրբազան հայր, եկեղեցական, աստվածաբանական աշխատություններ ունե՞ք հրատարակված:**

- Ոչ: Ուրիշ բաներ ունիմ՝ թարգմանություններ: Քեմալ Յալչընի երկու գիրքերը թարգմանեցի՝ «Սիրտս քեզմով կխայտա» եւ «Սարի գելին», որոնք ավելի հայկական հարցին հետ առնչություն ունին, կազմած եմ անձնանուններու բառարան, հոդվածներ ունիմ՝ հրապարակախոսություն, մեր եկեղեցվո պատմության մասին տեղեկատվական բնույթի հրապարակումներ, որ տպագրված են Մարսեյլի «Արմենիա», Պոլսո «Մարմարա» թերթերուն մեջ:

**- Սրբազան, հայտնի՞ է, թե Կ.Պոլսո ընտրություններին քանիսը քվե տալու իրավունք ունեն:**

- 18 տարեկանեն վեր ամեն մարդ կրնա մասնակցիլ: Վերջին անգամ 16 հազար հոգի մասնակցեցավ, կրնա նաեւ 50 հազար մասնակցիլ, եթե անտարբեր չըլլան: Կըսեն 70 հազար հայ կա, անոր 50 հազարը եթե 18 տարեկանը լրացուցած է, ուրեմն կրնան ընտրել:

**- Քանի՞ հոգի ունկնդիր եղան Ձեր քարոզներին:**

- Չեմ գիտեր: Տեղ մը 500, տեղ մը 700, տեղ մը 400, այդպես:

**- Սրբազան հայր, ինչո՞ւ որոշեցիք դնել Ձեր թեկնածությունը: Որովհետեւ Ձեր սիրելի Պոլի՞սն է , թե՞ պաշտոնական դիրքի առաջընթաց նկատելով:**

- Ոչ, ոչ: Ուղղակի բարեկամներու շատ ճնշում կար, որ ես ալ դնեմ (թեկնածությունս), քանի որ նախորդ երկու անգամ չէի դրած՝ 1990 եւ 1998 թվականներուն, նորեն թեկնածու կրնայի ըլլալ, չդրի, այս անգամ ուզեցին, որ անպայման դնեմ եւ այդ փափագին ընդառաջելու համար էր, չէ նե այդպես մասնավոր ցանկություն մը չիկար:

**- Ցուրտ Գերմանիայում Ձեզ ավելի լա՞վ եք զգում:**

- Ցուրտ Գերմանիան երբեմն ավելի ազատ է, քան պատրիարքարանի մեջ, ուր պիտի բանտարկվէ, չէ՞, ազատություն չունիք: Հոս կելլաք ձյունագնդակ կխաղաք պարտեզը, չէ՞:

**- Եթե Դուք ընտրվեք, ո՞ւմ եք տեսնում Գերմանահայոց առաջնորդի պաշտոնում:**

- Եկեղեցականներ կան, Վեհափառը կրնա ուրիշ մեկը թելադրել, բայց աստեղի եղածներուն մեջ հայր Սերովբեն ամենեն հարմարն է, իմ կարծիքով, ժողովուրդն ի վերջո իր ճանչածը պիտ նախընտրե: Ինծմե վերջը կրնա հայր Սերովբեն այս պաշտոնը կատարել: Ինքը ամենեն փորձառուն է հոս եղողներուն, հետո մոտեն ճանչցավ ժողովուրդը, մտածելակերպը, լեզուն, առավելությունները շատ են, հետո 15 տարի է իմ հետս է, ոչ մեկ անգամ ո՛չ ինծի, ո՛չ համայնքին դժգոհություն չէ պատճառած:

**- Գերմանահայությունը Ձեր առաջնորդությամբ ինչպիսի՞ մարտահրավերներ դիմակայեց: Ո՞րն է Ձեր ամենակարեւոր ձեռքբերումը:**

- Բացի պզտիկ մշակութային միություններեն ոչ մեկ բան գոյություն ուներ: Ինչ որ կա առաջնորդության շուրջ, իմ օրոք եղավ, անշուշտ, իմ աշխատակիցներու եւ իմ միջոցավ: 15 եկեղեցական համայնք մեջտեղ եկավ, այս եկեղեցական համայնքները իրենց կանոնադրություններն ունեցան, բոլորը միաձել, եւ կապվեցան առաջնորդության՝ կենտրոնի մը: Եկեղեցիներն իրենց կրոնականներն ունեցան, ոչ բոլորն անշուշտ, որովհետեւ դրամ ալ չիկա, բայց այսօր կանոնավոր կերպով եկեղեցականներու ամսականները կվճարվին, կանոնավոր կերպով երթեւեկություն կկատարվի: Միջեկեղեցական շարժումին մեջ բավական անուն շահեցավ Հայ եկեղեցին եւ այս ձեւով թե՛ մեր կրոնքը, թե՛ հայ եկեղեցվո, հայ ժողովրդի պատմությունը, ցեղասպանությունը, այս բոլորը օտար կազմակերպություններու մոտ հայտնեց, բացատրեց, հետո գրքույկներ տպվեցան կրոնական բովանդակությամբ, մշակույթի վերաբերյալ: Մշակույթի հանձնախումբ կազմվեցավ, որ բավական երկար տարիներ իր գործունեությունը կտանի թե՛ հայերու, թե՛ գերմանացիներու համար:

**- Սրբազան հայր, գերմանահայության մի ստվար հատված միշտ դժգոհում է, որ հայկական եկեղեցում հայերենից հետո Դուք թուրքերեն եք քարոզում:**

- Այո: Երբեմն ալ՝ գերմաներեն: Որովհետեւ մարդիկ կան, որ կզանգատին, որ չեն հասկնար՝ ինչո՞ւ միայն հայերեն կխոսինք:

**- Պոլսում Դուք կարեւորեցիք դպրոցաշինությունը, այստեղ էլ կարելի է ասել՝ եկեղեցին պիտի նպաստի, որ հայերեն խոսեն:**

- Այո, բայց հոս կարելիություն չունինք ադիկա իրականացնել՝ համապատասխան ուսուցիչ պիտի ունենաս, համապատասխան վայր մը պիտի ունենաս, համապատասխան աշակերտ պիտի ունենաս: Նայեցեք՝ քանի՞ աշակերտ կա՝ եղած-չեղած 10-20 աշակերտի շուրջ կդառնա ամեն տեղ, անոնք ալ 2 ամիս կուգան, երրորդ ամիսը բացակա են: Անանկ որ հոս՝ դպրոց չեղած տեղը, կարելիություն չիկա: Հնարավորություններով պետք է խոսինք, անհնարին բաներու մասին երազներ տեսնելը ավելորդ ժամավաճառություն է: Հիմա հոս ժողովուրդ մը կա, որ դժգոհ է՝ չեն հասկնար քարոզ ըսված ատենը, պետք է եկեղեցիին մեջ կրոնական սնունդ մը առնելով երթա մարդ, եթե ադ չառներ, ի՞նչ իմաստ ունի եկեղեցի գալ: Ավետարանի խոսքը, Քրիստոսի պատգամը պիտի իմանա, անոր հաղորդակից դառնա եւ տուն վերադառնա: Եթե անիկա չառած տուն երթա, ի՞նչ:

**- Ուրեմն հայ եկեղեցին նահանջո՞ւմ է լեզվով:**

- Քննադատության պատրաստակամություն ունեցող մարդիկը քննադատելու համար կքննադատեն, բան մը ըսած ըլլալու համար՝ իբրեւ թե շատ մեծ հայրենասեր են: Մշակույթի օրեր կընենք, այդ քննադատողներեն քանի՞ հոգի արդյոք ներկա են, եթե այդքան հայասեր են, իրենց պատմությունը, ժողովուրդը կսիրեն... հետեւաբար ասոնք բոլորը խախուտ տեսակետներ են: Մեր ժողովուրդի հոգեբանությունը գիտեմ՝ հավաքականության մեջ մեկը կելլա, քեզի դիտողություն մը կընե, ինքզինքը ցույց տալու համար, թե շատ կարեւոր անձնավորություն է, մինչդեռ իրականության մեջ ոչ մեկ բան չի ներկայացներ. այդպիսի պարապություններ լեցուն են մեր շուրջ: Այդ պատճառավ ալ արդեն մեր մշակույթի եւ կամ եկեղեցական աշխատանքները տեղ չեն հասած: Եթե լուրջ ըլլային իրենք, պիտի շրջապատեին եկեղեցվո վարչությունը, մեր շուրջը պիտի հավաքվեին, իրենց մասնակցությունը պիտի բերեին, ո՞ւր են:

AZG NEW PDF.qxd 2/18/2010 10:16 PM Page 1



**- Իսկ Պոլսում քարոզի վերջում հնարավո՞ր է, որ նորից թուրքերենին դիմեք:**

- Այո, երկու տեղ սրահներում մեջ թուրքերեն պահանջեցին, հայերեն սկսա, «թրքերե՛ն խոսիր» ըսին: Անոր համար պետք է դպրոցները ուժեղացվին: Թուրքերեն ըլլալու պարագային, գիտեք, մարդիկ քիչ մը տարօրինակ մոտեցում ունին: Ֆրանսայի մեջ մեկ հոգի հայերեն չի խոսիր, եկեղեցիներու մեջ հայերեն հազիվ աղոթքները կկարդացվին, առօրյա խոսակցությունը ֆրանսերեն է, տունին մեջ ֆրանսերեն է, փողոց կելլաք ֆրանսերեն է, Ամերիկա՝ անգլերեն, նույնիսկ պատարագը սկսան անգլերեն ընել, այսինքն՝ պարագան, համեմատությունները նույնն են: Ցեղասպանության հարց կա ըսելով թուրքերեն եթե իմանաք, ո՞ւ, մեծ աղետ մը կգործվի, կկարծվի: Ո՛չ, անանկ բան մը չիկա: Ժամանակի բերած պայմաններն այսպես են: Այսօր զարմանալի է ինծի պարագան օրինակի համար՝ հայ մը թուրքի հետ կամուսնանա Թուրքիա, հոս ալ:

**- Հայ եկեղեցին ընդունո՞ւմ է այդ միությունը:**

- Մկրտելու պայմանավ միայն ընդունիլ կարելի է: Եթե ենթական պատրաստ է կրոնքը ընդունելու:

**- Գերմանիայում քանի՞ այդպիսի դեպք գիտեք:**

- 4-5 հոգի եղած է:

**- Դուք սա ձեռքբերո՞ւմ եք համարում՝ թե թուրքի հետ ամուսնանալով նրան դավանափոխ ենք անում, ավելացնում Հայ եկեղեցու հետեւորդների թիվը, թե՞ կորուստ:**

- Սիրելի քույրս, ասիկա ո՛չ կորուստ է, ո՛չ շահ: Ասիկա ենթականերու ցանկությունն է, որուն միջամտելու իրավունք չունիք: Իմ սեփական կյանքս է ասիկա, Դուք մի՛ խառնվիք: Ծնողներուն չեն ձգեր որ խառնվին, ի՞նչ կրնաք ընել: Դուք նստեցեք, հաշիվ ըրեք՝ կորուստ է, չէ նե շահ է: Շա՞հ է Հայաստանեն մարդիկ դուրս կուգան հարյուրներով, հազարներով, թուրք վարչապետը հայտարարեց՝ 100 հազարին չափ մարդ եկեր է Հայաստանեն:

**- Էրդողանը թվերը չափազանցնո՞ւմ է, սխա՞լ է իր հայտարարությունը:**

- Գիտենք, որ աստեղը այդքան թիվով մարդ կա, Հայաստանեն մարդիկ Թուրքիա կերթան արձակուրդ ընելու համար, հիմա շա՞հ է, չէ՞ նե կորուստ է: Այսօրվա պայմանները, երթեւեկը, տուրիզմը, չեմ գիտեմ ինչը մեկ անկյունեն չպետք է դիտել, տարբեր դիմեզիոններով, համեմատություններով պետք է վերլուծել , այն ատենը պիտի ճիշտ կարծիքին հասնիք: Ես 20 տարի ապրեցա Ֆրանսա, հոն պաշտոնավարեցի, եթե ամեն ամիս միջին հաշվով 10 հատ պսակ ընեի, 9 հատը օտար ամուսնություն էր՝ ամեն տեսակը կար՝ ֆրանսացին, սպանացին, ալջերիացին, սեւամորթը, դեղնամորթը: Հիմա սա ի՞նչ է՝ կորո՞ւստ է, չէ՞ նե շահ է:

**- Խառնամուսնությունների տեսակետից Գերմանիայում վիճակն ինչպե՞ս է:**

- Հիմակուհիմա ավելի լավ է, բայց հոս ալ սկսավ: Նայեցեք շուրջը՝ կտեսնեք որ մեր երիտասարդներու երկու-երրորդին ընկերը կամ ընկերուհին օտար է: Ցավալի է, բայց այսպես է:

**- Սրբազա՛ն հայր, ի՞նչ կոչ կուղղեք պոլսահայության:**

- Կմաղթեմ, որ լավ, ներդաշնակ ընտրության պայմաններ ստեղծվին, կռվի, վեճ-վիճաբանության առիթ չտրվի, արդեն մեր եկեղեցին բավական դարեր միշտ վերելքներ ունեցած է, բայց վիրավորանքներ ալ ունեցած է, այդ վերքերը չստանա, եկեղեցին եւ եկեղեցականությունը բարձր պահվին ժողովրդին կողմե եւ թեկնածուներուն մասին զգույշ թող ըլլան, ոչ մեկ անպատշաճ խոսքով չնվաստացնեն, որովհետեւ ասիկա անձը չէ, այլ եկեղեցին ու եկեղեցականությունը նվաստացուցած կըլլան, եւ կմաղթեմ, որ ժողովրդի մեծ մասը մասնակցի ընտրություններուն եւ մոտեն հետեւի յուրաքանչյուր թեկնածուի խոսքերուն, արարքներուն, հետո լավ ուսումնասիրեն եւ ըստ այնմ իրենց կարծիքին համապատասխան ընտրություն ըլլա:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
*Քյոլն, Գերմանիա*

# Օբամա-Դալայ-լամա հանդիպումը լուրջ «ազդանշան» է ՉԺՀ-ին

Փետրվարի 18-ին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Սպիտակ տանն ընդունել է Տիբեթի բուդդայականների առաջնորդ Դալայ-լամային: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ տեղի է ունեցել առանձնազրույց առանց ԶԼՄ-ների ու տեսախցիկների ներկայության: Եվ այդուհանդերձ հանդիպումը զայրացրել է Պեկինի իշխանություններին: Չինաստանը տիբեթցիների տարագիր հոգեւոր առաջնորդին ամբաստանում է անջատականության մեջ եւ նախապես զգուշացրել էր, որ Օբամա-Դալայ-լամա հանդիպումը կվնասի առանց այդ էլ լարված չին-ամերիկյան հարաբերություններին:

Չորեքշաբթի օրվանից Վաշինգտոնում գտնվող տիբեթցի առաջնորդը առաջին հերթին հանդիպել է տիբեթցիների համայնքի ներկայացուցիչների հետ: «Ֆիգարո» թերթը նշում է, որ Դալայ-լաման ԱՄՆ-ում մեծ ժողովրդականություն է վայելում եւ այդ երկիր է ժամանել մեկշաբաթյա այցով:

Թերթը մանրամասնում է, որ Օբաման տիբեթցի առաջնորդին ընդունել է Սպիտակ տան Քարտեզների դահլիճում եւ ոչ թե Ձվաձեւ աշխատասենյակում, որտեղ լրագրողները կարող էին լուսանկարել երկու ղեկավարների ձեռքսեղմումը, ինչը Պեկինում կգնահատվեր որպես մի նոր սադրանք:

Ի դեպ, Դալայ-լամայի վաշինգտոնյան այցելության ընթացքում նրան պետք է հանձնվի Կոնգրեսից ֆինանսավորվող ժողովրդավարության ազգային հաստատության մեդալը:

Ոչ Դալայ-լաման, ոչ էլ Վաշինգտոնը չեն պահանջում Տիբեթի անկախացում. Չինաստանն այդ տարածքն իրենն է համարում 13-րդ դարից, թեեւ զենքի ուժով գրավել է միայն 1950-ին:

Դեռ հանդիպման նախօրեին չին-տիբեթյան բանակցություններում Դալայ-լամայի գլխավոր պատվիրակ **Լոդի Ջարին** հայտարարեց, որ Սպիտակ տանը խոսվելու է Տիբեթի իրադրության մասին: «Նորին Սրբությունը նախագահին կխնդրի օգնել գտնելու Տիբեթի խնդրի այնպիսի լուծում, որը ձեռնտու լինի թե՛ տիբեթցիների եւ թե՛ չինացիների համար», ասել է նա:

Դալայ-լամայի խոսնակ Տենզին Տակլհան իր հերթին այն միտքն է արտահայտել, որ Բարաք Օբամայի եւ տիբեթցիների հոգեւոր առաջնորդի հանդիպումը «լուրջ ազդանշան» է ՉԺՀ-ին եւ ցույց է տալիս, որ Տիբեթի հարցը լուծելու ժամանակն է:

# Իրանին C-300 հրթիռների մատակարարումը ձգձգվում է

**Իրանին ռուսական C-300 զենիթային հրթիռահամալիրների մատակարարումը ձգձգվում է «տեխնիկական պատճառներով», որոնք ներկայումս վերացվում են: Այդ մասին Ինտերֆաքս գործակալության թղթակցին ասել է Ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայության առաջին փոխտնօրեն Ալեքսանդր Ֆոմինը:**

**Իրանական ԶԼՄ-ների տվյալներով, 2007-ի վերջերին կնքված ռուս-իրանական համաձայնագրով նախատեսվում է 800 մլն դոլարի դիմաց Իրանին մատակարարել C-300 տիպի 5 համալիր: 2008-ի դեկտեմբերին Թեհրանը հայտարարեց, թե C-300-ի շուրջը ձեռք է բերված սկզբունքային համաձայնություն, մինչդեռ ռուսական կողմը հերքեց այդ լուրը:**

**2009-ի հոկտեմբերի վերջերին «Վեդոմոստի» թերթը գրեց, որ ռուս-իրանական գործարքը սառեցված է: Ընդսմին Թեհրանն իբր արդեն կանխավճար է մուծել: Սակայն ռուսական այլ լրատվամիջոցներ, ՌԴ գործադիր կառույցների աղբյուրներ վկայակոչելով, հաղորդեցին, որ Ռուսաստանը կարող է առհասարակ հրաժարվել C-300-ի մատակարարումներից, եւ որ ռուսական կողմը գումարներ չի ստացել, քանզի պայմանագրի կիրարկումը չի հաստատել:**



**C-300 համալիրները նախատեսված են ժամանակակից եւ հեռանկարային ռազմօդանավերից ու թեւավոր հրթիռներից պաշտպանվելու համար: Ի դեպ, 2010-ի փետրվարի սկզբներին իրանցի զինվորականները հայտարարեցին, թե, չսպասելով ռուսական C-300-ների մատակարարումներին, իրենք սկսել են մշակել սեփական զենիթային հրթիռահամալիր, որի բնութագրերը «կգերազանցեն» ռուսական C-300-ին:**

# ԱՄՆ-Սիրիա. մերձեցման փորձեր

ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ուիլյամ Բըրնսը Դամասկոսում հանդիպել եւ բանակցել է Սիրիայի նախագահ Բաշար Ասադի եւ արտգործնախարար Վալիդ Մուալլեմի հետ: Բարձրաստիճան դիվանագետը Սիրիա է մեկնել այն բանից հետո, երբ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Դամասկոս դեսպան ուղարկելու որոշում է ընդունել (2005-ից հետո առաջին անգամ):

Փորձագետները կարծում են, որ ներկայիս բանակցությունների նպատակն է թուլացնել Սիրիա-Իրան կապերը եւ Սիրիային համոզել գործելու Արեւմուտքի առաջարկած մերձավորարեւելյան կարգավորման ծրագրի շրջանակներում:

BBC-ն նշում է, որ ԱՄՆ-Սիրիա հարաբերություններն աստիճանաբար կարգավորվում են 2005-ից ի վեր, երբ ԱՄՆ-ը հետ կանչեց իր դեսպանին Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանությունից հետո: Սակայն դեռ 1979-ին ԱՄՆ-ը Սիրիայի անունը մտցրել էր ահաբեկիչների ֆինանսավորող երկրների ցանկի մեջ: 2004-ին Կոնգրեսը հատուկ օրենքով արգելել էր ամերիկյան ապրանքների մեծ մասի վաճառքը Սիրիային:

Չնայած այս ամենին, ԱՄՆ-ը ուզում է Սիրիայի աջակցությունն ստանալ Իրանի հետ բանակցություններում, ինչպես նաեւ Թեհրանի վրա ազդել նրա միջուկային ծրագրի հարցում:

Փոխարենը ԱՄՆ-ը կարող է վերացնել հակասիրիական պատժամիջոցները, ինչպես նաեւ Իսրայելին ստիպել հրաժարվել Սիրիային պատկանող Գոլանի բարձունքներից, որոնք նա օկուպացրեց 1967 թ. արաբաիսրայելական պատերազմի օրերին:

Իսրայել-Սիրիա առճակատման դադարեցումն իր հերթին խթան կդառնա մերձավորարեւելյան հակամարտության կարգավորման համար:

# «Տոյոտա»-ում ճգնաժամը շարունակվում է

## *Հայաստանում չգիտե՞ն*

«**Ազգ**»-ը նախորդ համարներում անդրադարձել էր համաշխարհային ավտոարդյունաբերության հսկաներից մեկի՝ «Տոյոտա» ընկերության խնդիրներին: Հիշեցնենք, որ ընկերությունը, սպառողների բողոքների հիման վրա, համաշխարհային ավտոշուկայից հետ է բերում իր արտադրանքը: Իսկ բողոքները կապված են մեքենաների արգելակման եւ արագացման ոտնակների թերության հետ: Կոնկրետ՝ արագացման ոտնակը սեղմված վիճակից դժվարությամբ է դուրս գալիս, իսկ արգելակման ոտնակը, առհասարակ արգելակման համակարգը նույնպես, բավական թերի է գործում: Ընկերության նախագահ **Ակիո Տոյոդան** խոստովանել է, որ բոլոր թերությունների համար պատասխանատու են իրենք, եւ ներողություն էր խնդրել բոլոր սպառողներից: Հիմա էլ, մեքենաների հետկանչման հետ կապված, «Տոյոտան» ԱՄՆ-ի որոշ գործարաններում դադարեցրել է իր մեքենաների արտադրությունը: Հիմնականում այդ գործարանները գտնվում են Քենթուքի եւ Տեխաս նահանգներում: Գործարանների բոլոր աշխատողները 14 օր «կհանգստանան», որի ընթացքում, սակայն, «Տոյոտա»-ի ամերիկյան գրասենյակի ղեկավար Մայք Գոսսի խոսքերով, կշարունակեն ստանալ աշխատավարձ: Միայն Քենթուքիի գործարանում աշխատում են 6600 աշխատողներ, որոնք հավաքում են Camry, Avalon եւ Venza մոդելները:

Այս ամբողջ սկանդալը «Տոյոտա»-ի վրա բավական թանկ է «նստել»: Միայն անցած հունվարին ընկերության արտադրանքի սպառումը ընկել է 19 տոկոսով՝ կազմելով 98 հազար 796 մեքենա ամբողջ աշխարհում: Այս ցուցանիշը ամենավատն է անցած 12 տարիների ընթացքում:

Իսկ մեր երկրում, բնականաբար, տարբեր հեռուստաալիքներով ավելի հաճախակի են դարձել «Տոյոտա» մեքենաների գովազդները: Հայաստան արտասահմանյան մեքենաներ մտնում են, բնականաբար, հենց արտասահմանից, հետեւաբար «դրսի» որ երկրից էլ «Տոյոտան» մտնի Հայաստան, նույն խնդիրներն ունի, ինչ ամբողջ աշխարհում: Իսկ աշխարհում արդեն ավելի քան 9 մլրդ «Տոյոտա»-ներ են հետ կանչվել արտադրող ընկերություն՝ թերությունները վերացնելու համար, թերություններ, որոնցից նվազագույնը ճանապարհային պատահարներ են առաջացնում: Կարծում ենք այստեղ իր վճռական խոսքը պետք է ասի մեր ոստիկանությունը:

**ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ**

# ԱՄՆ տարածքում կապահովվի 100 մեգաբիտ հզորությամբ համացանց

**ԱՄՆ կապի դաշնային գործակալության ղեկավար Ջուլիուս Ջինաչովսկին հանդես է եկել 100 մլն տուն լայնաշերտ ինտերնետով ապահովելու նախաձեռնությամբ: 100 Squared կոչվող նախաձեռնության շրջանակներում 100 մլն տուն կարող է մուտք գործել վայրկյանում 100 մեգաբիտ արագությամբ լայնաշերտ ինտերնետ:**

**Electronista կայքէջը նշում է, որ եթե Կոնգրեսը հավանություն տա նախագծին, ապա ԱՄՆ-ում լայնաշերտ թափանցումը ներկայիս 65-ից կհասնի 90 տոկոսի: Ջինաչովսկին կողմնակից է Google Fiber տիպի նախագծերին, որոնցով նախատեսվում է տներում անցկացնել վայրկյանում 1 գիգաբիտ թողունակությամբ կապուղիներ:**

**Կապի դաշնային գործակալության գնահատմամբ, ԱՄՆ ամբողջ տարածքում լայնաշերտ ինտերնետի նոր ցանցի ծավալման արժեքը կկազմի 350 մլրդ դոլար: Միջոցների մեծ մասը պետք է ներդնեն մասնավոր ընկերությունները: ԱՄՆ իշխանությունների խնդիրն է համապատասխան ծրագրեր մշակել ներդրումների խթանման համար:**

# Իրավապաշտպանները դեմ են Մոսկվայում Ստալինի դիմանկարի տեղադրմանը

**Ռուսաստանցի իրավապահները մտադիր են թույլ չտալ, որ Մոսկվայի կենտրոնում տեղադրվի 2-րդ աշխարհամարտում Իոսիֆ Ստալինի դերի մասին պատմող վահանակ նրա դիմանկարով:**

**Մոսկվայի գովազդի, տեղեկատվության եւ ձեւավորման կոմիտեում BBC-ի թղթակցին հայտնել են, որ վահանակը Բուլվարնոյե կոլցոյում տեղադրվելու է «վետերանների կազմակերպությունների բազմաթիվ խնդրանքների համաձայն»: Ինտերֆաքս գործակալության տվյալներով, համապատասխան խնդրանքով քաղաքային իշխանություններին դիմել է Պատերազմի, աշխատանքի եւ իրավապահ մարմինների վետերանների Մոսկվայի խորհրդի նախագահ Վլադիմիր Դոլգիխը:**

**Իշխանությունները պարզաբանում են, որ «Գերագույն գլխավոր հրամանատարի դերին» նվիրված վահանակը տեղադրվելու է Հաղթանակի 65-ամյակի առթիվ, վետերանների ավանդական հանդիպավայրերից մեկում:**

**Մոսկվայի կենտրոնում Ստալինի դիմանկարների հայտնվելու հեռանկարը վրդովմունքով է ընկալվել իրավապաշտպան կազմակերպությունների կողմից: Այսպես, «Հանուն մարդու իրավունքների» շարժման առաջնորդ Լեւ Պոնոմարյովը ՌԻԱ գործակալության թղթակցին ասել է, որ «Ստալինին փառաբանող հրապարակային գովազդն անթույլատրելի է»: Նրա խոսքերով, քաղաքային իշխանությունների որոշումը «անարգում է ստալինյան հալածանքներից զոհված միլիոնավոր մարդկանց հիշատակը»:**

**Պոնոմարյովը նախազգուշացրել է, որ տվյալ քայլը կարող է հասարակության մեջ առաջացնել դիմակայություն:**

# Արդյոք կհաղթահարվի՞ ընթերցանության ճգնաժամը

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում փետրվարի 19-21-ը տեղի կունենա մանկապատանեկան գրքի երեւանյան 3-րդ ցուցահանդես-վաճառքը, որի պաշտոնական բացումը կլինի ամսի 20-ին գրադարանի ճեմասրահում: Գրքի տոնավաճառի կազմակերպիչներն են մշակույթի նախարարությունը, ազգային մանկական գրադարանն ու հրատարակիչների ազգային ասոցիացիան:

«Ցուցահանդես-վաճառքն ունի մի նպատակ՝ վերականգնել գրքի ու ընթերցողի միջեւ եղած կապը, ցուցահանդեսը հավակնում է ավանդական դառնալ եւ ուղղված է հաղթահարելու ընթերցանության ճգնաժամը: Ցավոք մեր զանգվածային լրատվամիջոցները, հատկապես, հեռուստաընկերությունները չեն անդրադառնում գրքին ու գրականությանը, այն էլ՝ մանկապատանեկան: Եթե մեր աշխատանքը չի լուսաբանվում եւ հասարակությունն էլ տեղեկացված չէ, ապա մենք չենք կարող ունենալ կրթված եւ ընթերցող սերունդ», երեկ ազգային մանկական գրադարանում՝ ասուլիսի ժամանակ, ասաց նույն գրադարանի տնօրեն **Ռուզան Տոնոյանը**:

Ցուցահանդես-վաճառքի օրերին լինելու են հետաքրքրական միջոցառումներ 3-18 տարեկան երեխաների ու պատանիների համար՝ հանդիպումներ մանկագիրների հետ, նոր գրքերի շնորհանդեսներ, կինոդիտումներ, գրքերի նվիրատվություն, եւ այստեղ բոլոր գրքերը վաճառվելու են ավելի մատչելի գներով՝ 20% զեղչով, այսինքն՝ վաճառվելու են ավելի էժան, քան՝ գրախանութներում: Շուրջ 25 հրատարակիչներ ներկայացնելու են իրենց արտադրանքը՝ «Անտարես», «Էդիթ պրինտ», «Զանգակ», «Արեգ»:

**«Ազգի»** հարցին, թե այսօր բովանդակության առումով ինչպիսի՞ն է մանկապատանեկան գրականությունը, Ռուզան Տոնոյանը պատասխանեց.

«Բավականին լավ աշխատանքներ կան, որոնք ունեն թեմատիկ բազմազանություն: Մեր գրադարանը ակտիվորեն համագործակցում է հրատարակիչների հետ, նրանց ներկայացնում ենք պահանջարկ ունեցող գրքերի ցանկը, ստեղծվել է գրադարան-հրատարակիչ-ընթերցող կապը»:




Մայրաքաղաքի մեկ-երկու գրադարաններ քիչ թե շատ ակտիվ են աշխատում, սակայն մարզերում գրադարանների վիճակը ծանր է, հատկապես, գյուղական համայնքներում:

Ասուլիսի մյուս բանախոսի՝ «Անտարես» հոլդինգի նախագահ **Արմեն Մարտիրոսյանի** խոսքով՝ կան գյուղեր, որտեղ գրադարանը, չգիտես ինչու, գտնվում է գյուղապետի տանը: Գյուղապետն ընթերցողներին գրքեր չի տալիս, ասելով, որ գրքերը կփչանան:

Փաստորեն, գյուղական համայնքներում գրադարանների ֆոնդերը ոչ միայն չեն համալրվում, այլեւ եղած գրքերն են անհասանելի, քանի որ գրադարանը գյուղապետի կապիտալն է:

Արմեն Մարտիրոսյանն անդրադարձավ նաեւ Հայաստանում գրքի շուրջ ստեղծված հարկային քաղաքականությանը, ըստ նրա՝ գրականության մեջ միակ ժանրը, որը հարկվում է ավելացված արժեքի հարկով, դա գեղարվեստական գրականությունն է: Այդ պատճառով էլ գեղարվեստական գրականություն գրեթե լույս չի տեսնում:

«Ընդհանրապես պետությունը չի ստեղծում հավասար իրավունքներ ոչ գրողների, ոչ էլ հրատարակչությունների համար, օրինակ՝ ֆինանսավորում է միջակ գրողներին, ոչ թե լավագույններին, իսկ մշակույթի նախարարությունն էլ որոշ մասով վեր է ածվում սուտ ինտելիգենտների սոցիալական հարցերը լուծող մի օրգանի», ասաց Արմեն Մարտիրոսյանը:

Հրատարակիչները միայն բողոքում ու մեղադրում են, իսկ հետաքրքրական է՝ իրենք ինչքանո՞վ են ճիշտ կատարում իրենց աշխատանքը, արդյոք օգնո՞ւմ են գրողին, կամ գովազդո՞ւմ են իրենց հրատարակած գրքերը:

«Էտենց ես տակ կտամ, ծախս եմ անում, հրատարակում եմ քիչ է, հետո էլ փող տամ, որ գովազդվի», վրդովված պատասխանեց հրատարակիչների ազգային ասոցիացիայի նախագահ **Մկրտիչ Կարապետյանը**:

Արմեն Մարտիրոսյանը հակադրվեց գործընկերոջ կարծիքին.

«Մարկետինգը պահանջում է, որ հրատարակչությունը ոչ միայն որակով պատրաստ արտադրի, որը կունենա մատչելի գին, այլեւ հոգա արտադրանքի գովազդային ծախսերն ու գիրքը հասցնի ընթերցողին»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# «Հայ լեզուն տունն է հայուն»

**Երեկ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը լրագրողների հետ հանդիպման ընթացքում հայտարարեց, որ մայրենի լեզվի պաշտպանության հարցը դարձել է խիստ հրատապ, եւ հարկավոր է մայրենին համազգային ուժերով փրկել նահանջից: Այդ ուղղությամբ ՀԳՄ-ի հետ համատեղ մշակվել է հատուկ ծրագիր, որին էլ միացել է նաեւ Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչությունը եւ ամբողջ տարվա ընթացքում հանրապետությունում եւ սփյուռքում կանցկացվեն «Մայրենի լեզվի տոնին» նվիրված բազմաթիվ ու բազմաբնույթ միջոցառումներ՝ օգնելու եւ լուծման բանալիներ գտնելու:**

**Նախարարը պաշտոնյաների լեզվին անդրադառնալով, նշեց. «Պաշտոնական լեզուն այսօր տագնապահարույց է: Մենք՝ պաշտոնյաներս, պարտավոր ենք մայրենի լեզուն օգտագործել անաղարտ ու այն ոսկեղենիկ ձեւով մատուցել հասարակությանը: Երկրորդ կարեւոր խնդիրը դա եթերի լեզուն է, որի ազդեցությունն ամենաշատն է ու բոլորիս էլ պարզ է, թե ինչպիսի լեզվով են մատուցվում նյութերն ու սփռվում աշխարհով մեկ...»: Տկն Հակոբյանը նաեւ անդրադարձավ գրավոր ու համացանցային մամուլին ու հորդորեց, որ մենք պետք է զերծ մնանք օտարաբանություններից, աղճատվածություններից, ժառգոններից, որոնք մեծ ազդեցություն են ունենում երիտասարդության կրթության ու դաստիարակության վրա: Եվ այս ամենի շտկման խնդիրը բոլորիս՝ հայ ընտանիքների ու դպրոցների գործն է:**

**Այնուհետեւ նախարարն անդրադարձավ առաջիկա ծրագրերին ու տեղեկացրեց, որ սփյուռքի տարբեր համայնքներում մայրենիի ուսուցումն անցկացվում է տարբեր ծրագրերով, տարբեր դասագրքերով: Եվ այդ խնդրի շուրջը մայիսի 29-31-ը ՀԳՄ-ի հետ կանցկացվեն «Արեւմտահայերենի ուսուցման վիճակը սփյուռքում» գիտամեթոդական համաժողով, սեմինար, քննարկում, որի արդյունքում ձեւավորված հանձնաժողովը կստեղծի համահայկական դասագրքեր, որով էլ՝ մեկ ծրագրով կիրականացվի ուսուցման գործընթացը: Հաջորդ համաժողով-քննարկումը, որը նախաձեռնում է սփյուռքի նախարարությունն ապրիլի 25-26-ը՝ «Հայ ինքնության որակների պահպանումը խառը ամուսնություններում» թեմայով է: Տարվա ընթացքում կանցկացվեն երկու փառատոներ՝ արեւմտահայերենի ուսուցման եւ Վահան Տերյանին ու Ռուբեն Սեւակին նվիրված:**



## Փետրվարի 19՝ գիրք նվիրելու օր

**ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը ցավով նշեց, որ այսօր մեր հանրապետության չափահաս բնակչության 70 տոկոսից ավելին գիրք չի կարդում ու նաեւ 10-15 անգամ նվազել են գրքերի, թերթերի տպաքանակները, դա արդեն մտահոգվելու խնդիր է առաջացնում, թե ինչպիսի՞ գրագետ սերունդ ենք ունենալու վաղը:**

**Պրն Անանյանը նշեց, որ երկրորդ անգամ հանրապետությունում անցկացվում է գիրք նվիրելու օր: Անցած տարի շուրջ 15.000 կտոր գիրք է նվիրվել մարզերի դպրոցներին ու գրադարաններին: Այս տարի ՀՀ ԳԿ նախարարությունը քաղաքապետարանի կրթ. վարչության հետ համատեղ ողջ հանրապետությունում 150 գրողներ կհանդիպեն աշակերտների հետ, ու նրանց կնվիրաբերվի մի քանի հազար կտոր գրականություն: Ակցիային միացել է նաեւ «Գիրք» հիմնադրամը (նախագահ՝ Ալիսա Ադամյան) եւ նրանք մանկատներին կնվիրեն մի քանի հարյուր կտոր գիրք:**

**Այսօր հանրապետության բոլոր գրադարաններում ու թանգարաններում կանցկացվեն միջոցառումներ, որոնք նվիրված կլինեն օրվա խորհրդին եւ մայրենիի պահպանմանը, նշեց պրն Անանյանը եւ կարեւորեց «Ընթերցանության ազգային ծրագիր» ունենալու խնդիրը, որով կլուծվի ստեղծված ճգնաժամային վիճակը՝ կապված մայրենի լեզվի հիմնահարցերին:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ



# «Ազնիվ վերաբերմունք սիրելի Հաիթիին»

## Ազնավուրի եւ հարյուրավոր երգիչների նախաձեռնությունը

**Ավելի քան 200 հազար մարդու կյանք խլած հունվարի լույս 12-ի գիշերը Հաիթիում տեղի ունեցած 7 բալանոց երկրաշարժը, որը Կարիբյան ծովի շրջանում ամենաուժեղն էր, դեռեւս մնում է աշխարհի ուշադրության կենտրոնում: Ինչպես քսանմեկ տարի առաջ Սպիտակի (Հայաստան) ավերիչ երկրաշարժի դեպքում, այնպես էլ այս անգամ աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրը հանդես է եկել մարդասիրական նախաձեռնությամբ, որին միացել են սենեգալցի Յուսու Ն'Դուրը եւ 40 այլ երգիչ-երգչուհիներ: «Ազնիվ վերաբերմունք սիրելի Հաիթիին» (Un geste pour Haiti cherie) երգը, որի երաժշտությունը գրել է հիփ-հոփ երաժշտության ճանաչված դեմքերից Նեգ Մարրոնը, իսկ խոսքերը՝ երգիչներից ամեն մեկը, մի տող հորինելով, ապրիլի 2-ին պաշտոնապես հնչելու է «Իվ Ռենո» դահլիճում եւ հասույթը տրամադրվելու է միջազգային Կարմիր խաչին եւ «Գործել հանուն երեխաների» կազմակերպությանը: Մասնակից երգիչ-երգչուհիների թվում են Լինշան, Սինգուիլան, Զազին, Յուսուֆան, Միշել Դրուկերը, Ալիբին, Սեզարիա Էվորան, Օֆելի Ուինտերը եւ այլք, մեծ մասը սեւամորթ ռեպերներ: «Մենք պետք է մի բան անեինք: Այնտեղ դժոխային թշվառությունից բացի ոչինչ չի մնացել», ասել է այս առթիվ Հաիթիում ծնված, բայց այժմ Կանադայում ապրող կոմիկ Էնթոնի Կավանան:**

**Մյուս կողմից Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունը նոր տաղանդներ որոնող ամերիկյան եւ անգլիական ծրագրերի (American Idol եւ Britain´s got Talant) հեղինակ Սայմոն Քոուելին խնդրել է բարեգործական համերգ կազմակերպել ի նպաստ Հաիթիի երկրաշարժից տուժածների, խոստանալով հարկերից ազատել միջոցառումը: Քոուելն ընտրել է REM խմբի 1992 թվի հայտնի երգերից Everybody Hurts-ը, որի նոր, վերամշակված տարբերակին մասնակցել են երգիչներ Ռոդ Ստյուարտը, Մարայա Քերրին, Լեոնա Լյուիսը, Մայքլ Բուբլեն, Ջեյմս Բլանթը, Սյուզան Բոյլը, Քայլի Մինոգը եւ ուրիշներ:**

**Երգի պրեմիերան ռադիոյով հնչել է փետրվարի 2-ին, իսկ համապատասխան սինգլը թողարկվել է փետրվարի 7-ին: Ձայնագրությունը 2 օրում միայն Մեծ Բրիտանիայում վաճառվել է 205 հազար օրինակ, իսկ առաջին շաբաթվա ընթացքում 453 հազար օրինակ, որը 21-րդ դարում Բրիտանիայում ամենաարագ վաճառված բարեգործական ձայնագրությունն է համարվել:**

**Ավելացնենք, որ վերոնշյալ միջոցառումներից բացի, «բարեգործական հիմն» հորջորջված We are the World երգը հարյուր երգիչ-երգչուհիների կատարմամբ դարձյալ հնչեց փետրվարի 12-ին Վանկուվերում (Կանադա) ձմեռային օլիմպիադայի բացման արարողության ժամանակ:**

**Հին եւ նոր սերունդների այս սիրելի երգի նոր կատարման ամբողջ հասույթը հատկացվել է Հաիթիի ահավոր երկրաշարժից տուժածներին օգնություն ցուցաբերելու համար:**

**Քուինսի Ջոնսը (76 տարեկան) եւ Լայոնել Ռիչին (ով Մայքլ Ջեքսոնի հետ 25 տարի առաջ գրել էր երգը) որոշել էին հունվարի 28-ին վերաձայ-**



**նագրել երգը 25-ամյակի առթիվ, սակայն Հաիթիի երկրաշարժը ստիպել էր նրանց հետաձգել ծրագիրը մի քանի օրով եւ, ըստ ինտերնետային հաղորդագրության, վերաձայնագրությունը տեղի է ունեցել փետրվարի 1-ին Հենսոն ստուդիայում: Մասնակցել են Փինքը, Էմինեմը, Քանյե Ուեսթը, Սելին Դիոնը, Ուայքլեֆ Ժանը, Բարբրա Ստրեյզընդը, Ջոշ Գրոբանը, Անուփ Դոգը, Կառլոս Սանտանան, Էնրիկե Իգլեսիասը, Թոնի Բրաքստոնը, Մայքլ Ջեքսոնի քույրը՝ Ջանեթ Ջեքսոնը, եւ բազմաթիվ այլ կատարողներ: Բիոնսեն մասնակցել է հեռակա կարգով:**

**Հիշեցնենք, որ առաջին անգամ երգը թողարկվել էր 1985-ի մարտին: Ձայնագրվել էր 1985-ի հունվարի 28-ին՝ մասնակցությամբ 45 գերաստղերի, որոնց թվում էին Սթիվի Ուոնդըրը, Սինդի Լոպերը, Բրյուս Սփրինգստինը, Թինա Թըրները, Դայանա Ռոսը, Մայքլ Ջեքսոնը եւ ուրիշներ: Երգը ավելի քան 30 միլիոն դոլարի եկամուտ էր բերել «Ամերիկան Աֆրիկայի համար» կազմակերպությանը, որը պայքարում էր Աֆրիկայում սովի վերացմանը նպաստելու համար:**

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Գրան պրի՝ Սբ Գեղարդ վանքի երգեցիկ խմբին

**Փետրվարի 11-14-ը Բելառուսի Գրոդնո քաղաքում տեղի ունեցած «Կոլոժսկիյ Բլագովեստ» ուղղափառ երգասացության մրցույթ-փառատոնի գլխավոր մրցանակը՝ Գրան պրին, շահել է Հայաստանի մասնակից Սբ Գեղարդ վանքի երգեցիկ խումբը:**

**2005-ից գործող «Կոլոժսկիյ Բլագովեստ» փառատոնը միտված է ուղղափառ երգասացության մշակույթի պահպանմանն ու զարգացմանը: Փառատոնի մասնակիցները ինչպես տեղի, այնպես էլ արտերկրից ժամանած խմբեր են: Այս տարվա փետրվարյան մրցույթ-փառատոնի եզրափակիչ փուլի մասնակիցները ներկայացնում էին Բելառուսը, Լիտվան, Սերբիան, Ռուսաստանը, Լեհաստանը եւ Հայաստանը:**

**Սբ Գեղարդ վանքի երգեցիկ խումբը՝ գեղարվեստական ղեկավար Մհեր Նավոյան, խմբավար Անահիտ Պապայան, փառատոնին մասնակցել է հայ հոգեւոր եւ ժողովրդական երգերի կոմպոզիտորական մշակումներով եւ միջնադարյան հոգեւոր մոնոդիաներով (Սբ Մեսրոպ Մաշտոցի եւ Ստեփանոս Սյունեցու շարականներ, միջնադարյան շարականների Կոմիտասի՝ խմբերգային, ժամանակակից կոմպոզիտորներից՝ Երվանդ Երկանյանի մշակումներ, նաեւ՝ Մակար Եկմալյանի մշակմամբ Սուրբ պատարագից «Տեր ողորմեա»):**

**Սբ Գեղարդ վանքի երգեցիկ խումբը հիմնադրվել է 2001-ին: Այդ շրջանում էլ խմբի ղեկավարությունն ստանձնել է երաժշտագետ, միջնադարյան երաժշտության հմուտ մասնագետ Մհեր Նավոյանը: Երգչախումբը համերգային լայն գործունեություն է ծավալել թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում: Հոգեւոր երաժշտության փառատոների է մասնակցել 2005-ին՝ Ֆինլանդիայում, 2008-ին՝ Ֆրանսիայում եւ Չեխիայում, Կոմիտասի 140-ամյակին նվիրված համերգներով մասնակցել է Շտուտգարդի Բախ-ակադեմիայի փառատոնին:**

**Խմբի՝ այս տարվա «Կոլոժսկիյ Բլագովեստ» փառատոնային մասնակցությունը իրականացել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հովանավորությամբ:**

Ս. Բ.

AZG NEW PDF.qxd 2/18/2010 10:14 PM Page 1



# Հայերից լավագույնը Գաբրիել Սարգսյանի արդյունքն է

Մոսկվայում ավարտվեցին «Աէրոֆլոտի» մրցանակների համար անցկացված շախմատային փառատոնի «A1» եւ «A2» խմբերի մրցումները: Ուժեղագույնների խմբում հանդես եկած հայաստանցի չորս գրոսմայստերներից առավել հաջող հանդես եկավ Գաբրիել Սարգսյանը: Նա թեեւ մրցաշարն անցկացրեց առանց պարտության, սակայն 9 հանդիպումներում ընդամենը 2 հաղթանակ տոնեց ու վաստակած 5,5 միավորով գրավեց 12-րդ տեղը 80 մասնակիցների մեջ: Ավարտական տուրում Գաբրիելը հաշտություն կնքեց ռուսաստանցի Արտյոմ Տիմոֆեեւի հետ:

5-ական միավորով 31-րդ եւ 32-րդ տեղերը զբաղեցրին Հրանտ Մելքումյանն ու Արման Փաշիկյանը: Նրանք ավարտական տուրում հաշտություն կնքեցին համապատասխանաբար Ռաուֆ Մամեդովի եւ Իվան Սալգադոյի հետ: Զավեն Անդրեասյանը եւս վերջին պարտիան ոչ-ոքի ավարտեց Լուկա Լենիչի հետ եւ 4 միավորով հանգրվանեց 62-րդ հորիզոնականում: Ռուսաստանցի Սերգեյ Գրիգորյանցը 5 միավորով գրավեց 28-րդ տեղը, իսկ Ուկրաինան ներկայացնող Յուրի Հայրապետյանը 3,5 միավորով 68-րդն է:




Մրցաշարի հաղթող ճանաչվեց վիետնամցի գրոսմայստեր Լե Քուանգը: 2647 վարկանիշ ունեցող շախմատիստը 9 հնարավորից վաստակեց 7 միավոր: Ավարտական տուրում նա հաղթեց ռուսաստանցի Յան Նեպոմնյաշչիին: Նախորդ տուրում Քուանգի հետ աղյուսակը գլխավորող վիետնամցի մեկ այլ շախմատիստ՝ Նգուեն Սոն պարտվեց Անտոն Կորոբովին եւ 6 միավորով գրավեց միայն 5-րդ տեղը: Իսկ Կորոբովը 6,5 միավորով զբաղեցրեց 2-րդ տեղը: 3-րդ տեղում 6 միավորով Ալեքսանդր Մոտիլյովն է:

«A2» խմբի մրցաշարում Տիգրան Քոթանջյանը 5 միավորով 66 մասնակիցների մեջ 25-րդ տեղը զբաղեցրեց: Ավարտական տուրում Տիգրանը ոչ-ոքի խաղաց թուրք Էմրե Կանի հետ: Դավիթ Պետրոսյանը պարտություն կրեց Եկատերինա Կովալեւսկայայից եւ 4 միավորով զբաղեցրեց 44-րդ հորիզոնականը: Ռուսաստանցի Արթուր Գաբրիելյանը եւ ԱՄՆ-ում բնակվող Մելիքսեթ Խաչիյանը 5,5 միավորով գրավեցին համապատասխանաբար 13-րդ եւ 15-րդ տեղերը: Իսկ ռուսաստանցի Պողոս Նահապետյանը 4,5 միավորով 31-րդ տեղում է:

«A2» մրցաշարի հաղթողին որոշելու համար հարկ եղավ դիմել լրացուցիչ գործակիցների օգնությանը, քանի որ 5 շախմատիստներ վաստակել էին հավասար՝ 6,5-ական միավոր: Բախտը ժպտաց ռուսաստանցի Ալեքսեյ Պրիդորոժնիին: 2-3-րդ տեղերը գրավեցին գերմանացի Իգոր Գլեկն ու ռուսաստանցի Սեմյոն Դվոյրիսը:

# Մրցավարի սխալը «Ֆիորենտինային» թանկ արժեցավ

Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչում կայացավ եւս 2 խաղ: Մյունխենի «Բավարիան» մեծ ջանքերի գնով սեփական հարկի տակ 2-1 հաշվով հաղթեց իտալական «Ֆիորենտինային»: Ընդ որում հաղթական գոլը Միրոսլավ Կլոզեն խաղավերջում խփեց բացահայտ «խաղից դուրս» վիճակից, սակայն նորվեգացի մրցավար Թոմ Հենինգ Էվրեբեն հաշվեց գոլը:

Խաղից հետո նույնիսկ Կլոզեն է խոստովանել, որ գտնվում էր «խաղից դուրս» վիճակում: Իսկ «Ֆիորենտինայի» գլխավոր մարզիչ Չեզարե Պրանդելին իր վրդովմունքն է արտահայտել մրցավարի գործողություններից. «Մրցավարը երեք կոպիտ սխալ թույլ տվեց: Նա դաշտից հեռացրեց մեր ֆուտբոլիստ Գոբիին, կարմիր քարտ ցույց չտվեց Կլոզեին եւ հաշվեց «խաղից դուրս» վիճակից խփված գոլը: Երբ թիմդ մնում է 10 հոգով ու որակյալ ֆուտբոլ է ցուցադրում, արժանի չէ պարտության: Պատասխան խաղում մենք մեր ուժերին վստահ կլինենք: Մեր ֆուտբոլիստները հասկացան, որ կարող են հավասար պայքար մղել «Բավարիայի» դեմ»:

Պորտուգալական «Պորտոն» էլ սեփական հարկի տակ 2-1 հաշվով պարտության մատնեց Լոնդոնի «Արսենալին»: Այդ հաջողությունում պորտուգալացիներին օգնեց «Արսենալի» դարպասապահ Լուկաշ Ֆաբիանսկին, որի կոպիտ սխալների հետեւանքով դաշտի տերերը 2 անգամ գրավեցին նրա դարպասը: «Արսենալից» միակ գոլը խփեց Սոլ Քեմփբելը, որը 4 տարվա ընդմիջումից հետո կրկին մասնակցեց չեմպիոնների լիգայի մրցաշարին:

1/8 եզրափակիչի մյուս 4 հանդիպումները կկայանան հաջորդ շաբաթ: Փետրվարի 23-ին կմրցեն «Շտուտգարտն» ու «Բարսելոնը», «Օլիմպիակոսն» ու «Բորդոն», իսկ հաջորդ օրը կկայանան ԲԿՄԱ (Մոսկվա)-«Սեւիլիա», «Ինտեր»-«Չելսի» հանդիպումները:

# Ռուսներն առաջին ոսկե մեդալը նվաճեցին

Վանկուվերի օլիմպիական խաղերում ռուսաստանցի մարզիկներն առայժմ այնքան էլ հաջող հանդես չեն գալիս: Միայն մրցումների 5-րդ օրը նրանց հաջողվեց առաջին ոսկե մեդալը նվաճել: Տղամարդկանց դահուկային արագավազքում հաղթող ճանաչվեց Նիկիտա Կրյուկովը, որը մրցատարածությունը հաղթահարեց 3 րոպե 36,3 վրկ-ում: Նա վերջնագիծը հատեց իր հայրենակից Ալեքսանդր Պանժինսկու հետ միասին: Եվ միայն տեսագրությամբ պարզվեց, որ ոսկե մեդալակիրը Նիկիտա Կրյուկովն է:

Ռուսաստանցի դահուկորդները մրցումների ժամանակ միմյանց օգնում էին: Նրանց օգնեց նաեւ ղազախստանցի Ալեքսեյ Պոլտարանինը: Նա չկարողացավ հաղթահարել ողջ մրցատարածությունը, ընկավ ու դրանով խանգարեց նորվեգացի Պետերսենին պայքարելու մեդալների համար: Բրոնզե մեդալը բաժին հասավ նորվեգացի մեկ այլ դահուկորդի՝ Պետեր Նուրտուգին:



# Մայդիչի մարզական սխրանքը

Ձմեռային օլիմպիական խաղերի իսկական հերոսուհի դարձավ սլովենացի դահուկորդուհի Պետրա Մայդիչը: Մարզումների ժամանակ նա վնասվածք էր ստացել, սակայն չնայած ցավերին, մասնակցել էր դահուկային արագավազքի որակավորման մրցումներին եւ եզրափակիչի ուղեգիր էր նվաճել:

Եզրափակիչ մրցումներում էլ սլովենացի դահուկորդուհին իրեն լավագույնս դրսեւորեց: Եվ երբ նա հատեց վերջնագիծը, գիտակցությունը կորցրեց ու գետին ընկավ: Բժշկական անձնակազմն անմիջապես օգնության հասավ մարզուհուն, որը վնասվածքով հանդես գալով, դարձավ բրոնզե մեդալակիր: Իսկ ոսկե մեդալի համար հիմնական պայքարն ընթացավ նորվեգացի Մարիտ Բյոռգենի եւ լեհ Յուստինա Կովալչիկի միջեւ: Հաջողությունն ուղեկցեց Բյոռգենին:

# Օլիմպիական նոր ռեկորդով

Շորթ-տրեկի մրցումներում կանանց 500 մետր մրցատարածությունում չինացի մարզուհի Վան Մենը քառորդ եզրափակիչում բարելավեց օլիմպիական ռեկորդը (43,284 վրկ): Նա իր հավասարը չուներ նաեւ եզրափակիչ մրցումներում, որտեղ ցույց տվեց լավագույն արդյունքը (43,048 վրկ): Վան Մենը իր 2-րդ ոսկե մեդալը նվաճեց: Նա օլիմպիական չեմպիոն էր դարձել 4 տարի առաջ Թուրինում:

ՖՈՒՏԲՈԼ

# Մարտական ոչ-ոքի

Անթալիայում մարզումները շարունակող «Բանանցը» հերթական ստուգողական հանդիպումն անցկացրեց Ռուսաստանի պրեմիեր լիգայի «Անժիի» հետ: Գրանցվեց մարտական ոչ-ոքի՝ 2-2: «Բանանցը» Սամվել Մելքոնյանի խփած գոլերի շնորհիվ երկու անգամ հաշվի մեջ առջեւում էր, սակայն մրցակցին հաջողվեց խուսափել պարտությունից: Ընդ որում խաղի ընթացքում «Անժին» 11 մ հարվածի իրավունք ստացավ, սակայն չիրացրեց:

Թիմի գլխավոր մարզիչ Ստեւիցա Կուզմանովսկին շարունակում է ֆուտբոլիստների փորձարկումները: «Անժիի» հետ խաղում «Բանանցի» կազմում իրենց անդրանիկ հանդիպումներն անցկացրին նիգերիացի հարձակվող Դանիրան Օրտեգան եւ բրազիլացի դարպասապահ Իվան Ամորիմը: Բացի նրանցից, խաղին մասնակցեցին նաեւ Էդուարդ Կակոսյանը, Նիկոլայ Նիկոլովը, Դարկո Լովրիչը, Գագիկ Դաղբաշյանը, Նոա Կասուլեն, Արարատ Առաքելյանը, Սամվել Մելքոնյանը, Վալտեր Պողոսյանը, Դու Բալան: Փոխարինման մտան Արթուր Ոսկանյանը, Յովհաննես Համբարձումյանը, Սարգիս Կարապետյանը, Սարգիս Նասիբյանն ու Նորայր Գյոզալյանը:

Անթալիայում վերջին հանդիպումը «Բանանցը» կանցկացնի փետրվարի 20-ին, իսկ հաջորդ օրը կվերադառնա Երեւան:

# «Ուլիսը» մարզումները կշարունակի Ուռեկիում

Արտերկրում «Ուլիսն» իր առաջին ուսումնամարզական հավաքը կանցկացնի Ուռեկիում: Թիմի կազմում ներկայումս մարզվում են Հայաստանի ազգային հավաքականի նախկին հարձակվող Արա Հակոբյանն ու վրացի լեգեոնական Ջիկիան: Նրանց հետ արդեն նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել պայմանագրի կնքման հարցում: Արա Հակոբյանն անցյալ տարի խաղում էր «Միկայում», որի հետ պայմանագրի ժամկետի ավարտից հետո մեկնել էր Բելառուս: Սակայն Արային չհաջողվեց հաստատվել բելառուսական թիմերից որեւէ մեկում:

«Ուլիսում» խաղալու ցանկություն է հայտնել նաեւ Վահե Թադեւոսյանը: Ժամանակին «Արարատում» եւ «Բանանցում» հանդես եկած հարձակվողը միառժամանակ խաղաց Շվեյցարիայում, որտեղ «Արաուի» կազմում ծանր վնասվածք ստացավ: Դրա պատճառով Վահեն մի քանի մրցաշրջան խաղադաշտ դուրս չեկավ:

# Մխիթարյանն ամենաագրեսիվն է «Մետալուրգում»

Նոր մրցաշրջանին նախապատրաստվող Դոնեցկի «Մետալուրգը» ստուգողական վերջին հանդիպումն անցկացրեց շվեդական «Մալմյո» ակումբի հետ: Թիմի գլխավոր մարզիչ Նիկոլայ Կոստովը մեկնարկային կազմում ընդգրկել էր փորձառուներին, որոնց թվում էր եւ Հենրիխ Մխիթարյանը: Նա այս խաղում էլ աչքի ընկավ ագրեսիվությամբ: Առաջին խաղակեսում Հենրիխը կարող էր 2 անգամ գրավել դարպասը: Մի դեպքում նրա հարվածի ճանապարհը փակեցին պաշտպանները, մյուս դրվագում գլխի հարվածը մի փոքր շեղ ստացվեց: Ընդմիջումից հետո էլ դարպասները մնացին անառիկ:

Այսպիսով, «Մետալուրգն» ավարտեց ուսումնամարզական հերթական հավաքն Իսպանիայում: Նախապատրաստական շրջանում թիմն անցկացրած 8 հանդիպումներից 3-ում հաղթեց, 4-ն ավարտեց ոչ-ոքի, կրեց 1 պարտություն: Գնդակների տարբերությունն է 9-5: Այդ խաղերում առավել աչքի է ընկել Հենրիխ Մխիթարյանը՝ խփելով 3 գոլ:

# «Գանձասարը» կմասնակցի «Թուրքմենբաշու գավաթի» մրցաշարին

Կապանի «Գանձասարն» այս տարի էլ Հայաստանը կներկայացնի «Թուրքմենբաշու գավաթի» խաղարկությունում: Թիմն ավտոբուսով մեկնել է Իրան, որտեղից ինքնաթիռով կուղեւորվի Աշգաբադ:

«Գանձասարը» մրցաշարի մեկնարկային խաղում փետրվարի 20-ին ուժերը կչափի Թուրքիայի ակումբների հավաքականի հետ: 2 օր անց Սլավա Գաբրիելյանի սաները կմրցեն գավաթի նախորդ խաղարկության հաղթող թուրքմենական «Ալտին Ասիրի» հետ: Իսկ փետրվարի 24-ին խմբային մրցաշարի վերջին խաղում կապանցիների մրցակիցը կլինի Տաջիկստանի «Վախշը»:

Մյուս խմբում ընդգրկված են Ղրղզստանի «Աբդիշ Աթանը», ղազախական «Օկժետպեսը» եւ Թուրքմենստանի փոխչեմպիոն «Նեբիտչին»: Խմբերում 1-2-րդ տեղերը զբաղեցրած թիմերը կշարունակեն պայքարը կիսաեզրափակիչում: Հաղթողը կստանա 20 հազար դոլար, 2-րդ տեղը գրաված թիմը կպարգեւատրվի 10 հազարով, իսկ բրոնզե մրցանակակրին կհանձնվի 5 հազար:

«Գանձասարում» փորձաշրջան կանցնի «Փյունիկի» նախկին պաշտպան Հայկ Չիլինգարյանը: Մինչ այդ նա մարզվում էր «Միկայում», սակայն թիմում ընդգրկվել չհաջողվեց: «Գանձասարի» մարզիչները մտադիր են Աշգաբադում հետեւել տեղացի երկու հայ ֆուտբոլիստների՝ պաշտպան Արմեն Ղազարյանի եւ կիսապաշտպան Միշա Առուշանյանի գործողություններին: Ի դեպ, թիմի մարզչական կազմն էլ համալրվել է: Սլավա Գաբրիելյանին բացի Ավետիք Սարգսյանից, կօգնի նաեւ Ալբերտ Սարգսյանը:

# Հաղթական վերադարձ

Մոտ ութամսյա ընդմիջումից հետո վերադառնալով կորտ, Դավիթ Նալբանդյանը հաղթանակով նշանավորեց Բուենոս Այրեսի մրցաշարի մեկնարկը: Առաջին մրցախաղում արգենտինացի թենիսիստը 6-2, 7-6 հաշվով պարտության մատնեց իտալացի Պոտիտո Ստարաչեին: Երկրորդ փուլում նրա մրցակիցն իսպանացի Դանիել Հիմենո-Տրավերն էր: Այդ մրցախաղում էլ Դավիթը հաջողության հասավ, թեեւ հաղթանակն ավելի դժվարությամբ նրան տրվեց (6-7, 6-4, 7-6): Նալբանդյանը նշել է, որ շատ ուրախ է վնասվածքներից ապաքինվելու եւ կրկին կորտ վերադառնալու համար: Նա իր առջեւ նպատակ է դրել լավ մարզավիճակ ձեռք բերել ու բարձրացնել վարկանիշը: Նշենք, որ թենիսիստների համաշխարհային դասակարգման ցուցակում Նալբանդյանը հայտնվել է 140-րդ տեղում:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Շիրակցի անհաս տաքսիստների դայ-քարը կազմակերպված սոցիալական շարժման բնույթ է ստանում

## *Գյումրու հանրահավաքում արված առաջարկություններին միացել են նաեւ Լոռու մարզի վարորդներ*

Երեկ Գյումրու «Մայր Հայաստան» հուշահամալիրի տարածքում կայացավ քաղաքի եւ մարզի մի քանի հարյուր անհաս տաքսիստների հերթական հրազեկված հանրահավաքը, որին այս անգամ միացել էին նաեւ անհատական տաքսիների տասնյակ վարորդներ Վանաձորից: Արդեն երկար ժամանակ շիրակցի անհաս տաքսիստները փորձում են օրինական բոլոր ճանապարհներով իրենց խոսքը հասցնել իշխանություններին եւ հասնել ոլորտը կարգավորող օրենսդրության նոր ընդունված մի շարք հայտնի պահանջների վերանայմանը: Պահանջներ, որոնք հաշվի չառնելով նրանց շահերը, առանց այն էլ լարված սոցիալական իրավիճակում ու ներկա տնտեսական ճգնաժամի, գործազրկության պիռելի չափերի առկայության պայմաններում անելանելի վիճակ են ստեղծում զուտ գոյատեւման խնդիր լուծող իրենց հազարավոր ընտանիքների համար:

Այս տարվա հունվարի 18-ին տաքսիստները բողոքով դիմել էին ՀՀ օրենսդիր, գործադիր իշխանությունների ղեկավարներին, մարզից ԱԺ պատգամավորներին, Գյումրու քաղաքային եւ Շիրակի մարզային իշխանություններին՝ հանգամանալից ներկայացնելով իրենց առարկությունները եւ պահանջելով վերանայել իրենց կարծիքն ու շահերը հաշվի չառնող օրենսդրությունը, միաժամանակ պատրաստակամություն հայտնելով տարեկան 25-30 հազար դրամ հարկ վճարել տաքսի ծառայություններ մատուցելու համար: Շիրակցի տաքսիստների ներկայացուցիչները հունվարի 22-ին նաեւ հանդիպել են ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարին, նրա հետ մեկ ժամից ավելի քննարկել խնդիրները: Պետական պաշտոնյան լսել է նրանց առարկություններն ու բացատրությունները եւ իր հերթին բացատրել, որ օրենսդրության պահանջները հարկավոր է կատարել: Սակայն, ինչպես ներկայացվեց հանրահավաքում, մի քանի օր անց՝ փետրվարի 1-ին, նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարը կրկին հանդիպել է վարորդների երկու ներկայացուցիչների հետ եւ ներկայացրել խնդրո առարկա օրենսդրության հնարավոր փոփոխությունների առաջարկներ 8 կետից: Անցած օրերի տարբեր քննարկումներից հետո երեկվա հանրահավաքը կոչված էր պատասխանելու այդ առաջարկություններին:

Պատասխանը հանրահավաքում Շիրակի եւ Լոռու մարզերի թվով 850 անհաս տաքսու վարորդների անունից ընդունված հայտարարությունն էր, որում նրանք նախ ողջունում են այս խնդրի շուրջը իշխանությունների բանակցության պատրաստակամությունը եւ ակնկալում այդ ճանապարհով խնդրի իսպառ կարգավորում: Ըստ հայտարարության՝ վարորդների համար ընդունելի եւ իրենց պահանջների ոգուն լիարժեք համապատասխան են իրենց ներկայացված փոփոխության առաջարկությունների այն կետերը, որոնք վերաբերում են մեքենայում հաշվիչ տեղադրելու, ավտոմեքենաների՝ որպես տաքսի նկարազարդման եւ կահավորման (լույսեր եւ այլն), միավորումների դեպքում բժշկի եւ մեխանիկի հաստիքներ ունենալու պահանջները հանելուն: Մնացածը առարկություններ են, որոնցից առաջինը վերաբերում է դեղին համարանիշներ ունենալու պարտադրանքին, թեկուզ դրանք տրվեն անվճար, ինչպես իրենց առաջարկվում է: Այդ պետհամարանիշներով նախ չեն կարող ուղեւորափոխադրումներ կատարել Հայաստանից դուրս: Եվ երկրորդ՝ որեւէ տարբերականությամբ տաքսի ծառայություններ մատուցելու կամ չմատուցելու դեպքում փաստորեն ստիպված են լինելու պետհամարանիշները տարբերաբար փոխել դեղինից՝ սպիտակ եւ հակառակը, ինչն ավելորդ հոգս է:

«Մեր մշտական եկամուտները այս գործից անհնարին են դարձնում ընդունել 2-րդ եւ 7-րդ կետերով արվող առաջարկները՝ լիցենզիայի դիմաց 25.000 դրամ վճարելու եւ կենսաթոշակային ու հարկային ամսական վճարումներ կատարելու մասին...Բանն այն է, որ մեզնից շատերը, եթե ոչ բոլորը, մշտապես այդ գործով չեն զբաղվում, պարբերաբար հեռանում են այդ գործից եւ վերադառնում, օրեր են լինում, երբ չեն աշխատում եւ տարեկան աշխատում են 50 կամ 150 օր, 5 կամ 25 շաբաթ: Դրա փոխարեն մենք առաջարկում ենք այդ համակարգը վերանայել հիմնովին՝ ամսական հաստատուն վճարումների կտրոնային համակարգ ներդնելով: Այսպես. տաքսի ծառայություններ մատուցելու ցանկություն ունեցող վարորդներն այդ ծառայությունները մատուցելու ցանկության դեպքում կգնեն ամսական ստանդարտ կտրոն, կփակցնեն դիմապակուն եւ կվարեն ավտոմեքենան այդ ամբողջ ամսվա ընթացքում»: Գնահատելով իշխանությունների զիջումների պատրաստակամությունը, վարորդները վերանայում են իրենց նախկին դիրքորոշումը եւ պատրաստ են տաքսի ծառայություններ մատուցելու համար ամսական վճարել ոչ թե 2-2,5 հազար (տարեկան՝ 25-30 հազար), այլ 3,5-4 հազար (տարեկան 42-48 հազար) դրամ: Իրենց հաշվարկով՝ միայն Շիրակի մարզից այդ վճարման հանրագումարը կարող է կազմել տարեկան 50-70 մլն դրամ:

Ամենից շատ առարկությունները դարձյալ վերաբերում են անհատական տաքսի ավտոմեքենաների տարիքի մինչեւ 10 տարվա սահմանափակմանը, մանավանդ նկատի ունենալով, որ բավական է տեխզննում անցնելը: Ի դեպ, հանրահավաքում նշվեց, որ մինչեւ օրս որեւէ մեկը, պաշտոնյա թե ոչ պաշտոնյա, որեւէ կերպ չի կարողացել հիմնավորել ավտոմեքենայի 10 տարվա թարմության պահանջը կամ բացատրել, թե ինչու 10 տարվա եւ ոչ, ասենք, 8 կամ 12: Մինչդեռ Հայաստանում աշխատում են նաեւ 20 եւ ավելի տարեկան ուղեւորափոխադրող հազարավոր ավտոբուսներ ու միկրոավտոբուսներ, շտապօգնության, հրշեջ եւ արագ արձագանքման այլ ծառայությունների 20, 30, 40 տարեկան մեքենաներ, 20-50 տարեկան ինքնաթիռներ ու երկաթուղային վագոններ... Նաեւ անհեթեթ համարվեցին անհատական տաքսիների թվի սահմանափակման մասին նորահայտ խոսակցությունները, քանի որ այդ խնդիրը պետք է կարգավորի միայն շուկան:

Ընդունված հայտարարությամբ կրկին դիմելով իշխանություններին, անհաս տաքսիստներն առաջարկում են հաշվի առնելով իրենց հիմնավորումներն ու առաջիկա կենցաղային դժվարությունները, որոնց բախվելու ենք գազի, ջրի եւ հարակից թանկացումների արդյունքով, նաեւ հաշվի առնելով իրենց բազմահազարանոց բանակի շահերը՝ վերանայել գործող օրենսդրությունը եւ այն ծառայեցնել ավելի շատ՝ ՀՀ քաղաքացիների, քան մասնավոր կամ այլ շահերի...

Հակառակ դեպքում իրենք շարունակելու են վճռականորեն պայքարել՝ դիմելով նաեւ հասարակության ու միջազգային հանրության օժանդակությանը:

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**
**Գյումրի**

# Վարորդական իրավունք ստանալը կհեշտանա

**Հայաստանի կառավարության նոր որոշման համաձայն (որով լրացումներ եւ փոփոխություններ են կատարվել նախորդ որոշման մեջ), այսուհետեւ ավելի հստակ կլինի վարորդական իրավունք ստանալու ընթացակարգը: Մասնավորապես՝ մինչեւ 1992 թ. փետրվարի 21-ը ԽՍՀՄ երկրներում ստացած վարորդական վկայականները հնարավոր կլինի փոխանակել առանց որակավորման քննություն հանձնելու: Նույն հիմունքով իրենց վարորդական վկայականները կարող են փոխել նաեւ դիվանագիտական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների՝ ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձնակազմի անդամները: Նոր որոշմամբ հանվում է ավտոմոբիլի վարման քննական թերթիկը, փոխարենը գործնական քննության համար սահմանվում են առավել պարզ, հստակ, իրագործելի եւ գնահատելի պահանջներ, ինչպես նաեւ վարորդական վկայական տալու հիմք փաստաթղթերի պահպանման ավելի երկար ժամկետ՝ 5 տարի:**

**Կառավարությունը նաեւ որոշել է կարգավորել տրանսպորտային միջոցների նկատմամբ սեփականության եւ գրավի իրավունքների գրանցման ընթացակարգը: Ըստ այդ որոշման՝ տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի փոփոխության դեպքում պարտադիր է դրանց հաշվառումը (վերահաշվառումը):**

**Հ. Ա.**

**United Nations Development Programme**

**UNDP Armenia**

**VA 09-10-HR and VA 10-10-HR**
**Vacancy Announcement**

The United Nations Development Programme in Armenia invites applications from qualified and experienced candidates for the below positions within the framework of Support to SME Development in Armenia Project.

**1. VA 09-10-HR -Local Expert on Development of Business Model Programmes (two positions)**

**2. VA 10-10-HR -Team Leader/Expert on Local Expert on Development of Business Model Programmes**

Please visit **http://operations.undp.am/recruitment/** to obtain full Job Description, application procedures and requirements.

Applications can be submitted on-line through **http://operations.undp.am/recruitment/** site, or delivered hard copies to the UN House Security Desk, 14, P. Adamyan str.

A complete application form should consist of a letter of interest, copies of diplomas, an updated CV and the UN Personal History Form (P11), available at the UN House Security Desk. Please clearly indicate in your application the title of the position and the VA Number.

Applications can also be sent via post offices within a deadline period indicated below. Applications received after the closing date will not be considered. Only short-listed candidates will be contacted.

**Date advertised:** **19 February 2010**
**Closing date:** **28 February 2010, 18:00**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն իր դրամագիտական հավաքածուն համալրելու նպատակով գնում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից հին ու նոր դրամանիշեր՝ մետաղադրամներ եւ թղթադրամներ, որոնք տարբեր ժամանակահատվածներում շրջանառության մեջ են եղել պատմական Հայաստանի տարածքում:

Դրամանիշերի գնման նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ստեղծված է «Դրամանիշերի փորձաքննության եւ գնահատման հանձնաժողով», որն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի շենքում՝ յուրաքանչյուր երկուշաբթի ժամը 10-00-ից մինչեւ 13-00-ն:

Տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ 59-29-03, 56-16-55:

*ՀՀ կենտրոնական բանկ*

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԲԵՌՆԱՏԱՐ

1712 Մերսեդես Բենց մակնիշի 1985թ. արտադրության բեռնատար, 20 տոննա բեռնատարողությամբ, թափքով քարշակ, կիսակցորդ 8 անիվով, շարժիչի հզորությունը 230 ձիաուժ, փոխանցման տուփը 16 աստիճան հզորացված:

Գինը՝ պայմանագրային:

Մանրամասների համար զանգահարել 099 330470 հեռախոսահամարով:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի հեռուստատեսային ցանց» ՓԲ ընկերությունը (պատվիրատու) «ՄԲԱՀՀՌՑ 02/10» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **Հայաստանի հանրային հեռուստաընկերության ծրագրի ընդունիչ արբանյակային ցանցի կառուցման համար նախատեսված տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերման նպատակով**:

Մրցույթի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար՝ 1000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի ԱՇԻԲ, Աղասյան մ/ճ 247460117994 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Նորք, Հովսեփյան 95:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ը:

*«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ*

## Երեւանի Ապրանքա-Հումքային Բորսայի հարթակում շարունակվում է

ԱրմենՏել ՓԲԸ-ի կողմից ներկայացված ապրանքանյութական արժեքների, բժշկական թվային կոլորիմետրի, սարքերի, ԱՀԿ, ավտոմեքենաների եւ այլ գույքի աճուրդային վաճառքը:

Աճուրդներն իրականացվում են յուրաքանչյուր աշխ. օր ժ.11.00-ից 17.00-ն, ք. Երեւան Ագաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Աճուրդներին մասնակցելու կարգին, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228, նամակագրել **info@yercomex.am** կամ այցելել **www.borsa.am**

**Հայտարարություն**

Սույն թվականի փետրվարի 23-ին, ժամը 12.00-ին **«Ինստեյս Մենեջմենթ ընդ Ադմինիստրեյշն Քամփնի» ՓԲԸ** եւ **«Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը** կազմակերպում են հասարակական լսումներ Հալիձոր-Տաթեւ ճոպանուղու կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-15-68:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 18.21.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: